Azg

14 ՅՈՒՆՈՒԱՐ 1999 ՀԻՆԳՇԱԲԹԻ # 3 (1748)

Քոչարյանն ու Ալիեւը հավանաբար կհանդիպեն Դավոսում

ԲԱՔՈՒ, 13 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏՍՊԱՆ: ՌԴ-ն եւ Ֆրանսիան, որպես ղարաբաղյան հակամարտության կարգավորման ԵԱՀԿ ՄԽ համանախագահներ, գտնում են, որ «եկել է ժամանակը, երբ կողմերը պետք է նստեն բանակցությունների սեղանի շուրջ եւ անմիջականորեն քննարկեն կարգավորման կոնկրետ հարցեր»: Այս մասին հունվարի 12-ին Մոսկվայում ՌԴ եւ Ֆրանսիայի ԱԳՆ ղեկավարների համատեղ ասուլիսում հայտարարել են Իգոր Իվանովն ու Յուբեր Վեդրինը: Ըստ Իվանովի, ԵԱՀԿ ՄԽ շրջանակում վարվում է ակտիվ երկխոսություն կողմերի հետ, ուղղակի բանակցությունների դուրս գալու համար: Ինչպես հաղորդում են ադրբեջանական աղբյուրները, բացառված չէ, որ ՄԽ շրջանակում կողմերի բանակցությունների հերթական փուլի ժամկետները կճշտվեն հունվարի 28-ից փետրվարի 3-ը Դավոսում Համաշխարհային տնտեսական խորհրդաժողովի շրջանակում ակնկալվող Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների հանդիպման ընթացքում: Ղարաբաղյան հակամարտության կողմերի հանդիպման առաջիկա օրակարգը քննարկվել է դեկտեմբերի 29-30-ին Վարշավայում Ադրբեջանի եւ Հայաստանի ԱԳՆ ղեկավարների հանդիպմանը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Օսկանյանն ակնկալում է դիվանագիտական նոր, դրական տեղաշարժեր

1998-ը խաղաղական իրադարձությունների առումով շրջադարձային էր: Իշխանափոխությանը զուգընթաց փոփոխություններ արձանագրվեցին ոչ միայն արտաքին քաղաքական, այլեւ ԼՂ-ի հիմնախնդրում: Տարեսկզբին Վարդան Օսկանյանը արտաքին գերատեսչության փոխնախարարն էր եւ իր իսկ խոսքերով շատ հարցերում, առավել եւս ԼՂ-ի հիմնախնդրի վերաբերյալ ուներ վերապահումներ, սակայն փաստորեն կողմերը բացեց նախարարի պորտֆելը ստանձնելուց հետո միայն: Ամփոփելով 1998 դիվանագիտական տարին, արտգործնախարար Վարդան Օսկանյանը երեկ մամլո ասուլիս տվեց, որի ընթացքում բարձրացված հարցերին առավել հանգամանալից նա անդրադարձել էր նախապես մեր թղթակցին տված հեռուստալսումում:

- Ղարաբաղի հարցում փոփոխությունն ակնհայտ էր: Մերժվեց փուլային մոտեցումը, շեշտը դրվեց փաթեթային կարգավորման վրա: Առավել հստակեցվեց, Հայաստանը բացահայտ մերժեց Ադրբեջանի կազմում Ղարաբաղի մնալու գաղափարը, ինչը մինչ օրս հստակ չէր արվել: Մեր աշխատանքները հիմնականում այս ուղղությամբ էին ընթանում եւ վերջնարդյունքում այսօր սեղանին դրվեց առաջարկություն, որը գործընթացի առումով ընդունելի տարբերակ է, իսկ բովանդակության առումով չի կանխորոշում Ղարաբաղի կարգավիճակը Ադրբեջանի կազմում, ինչպես նախորդ փաստաթղթում էր արվել: Պետք է ասել, որ դրական տեղաշարժ է ոչ միայն Հայաստանի տեսանկյունից, այլեւ գործընթացի առումով եւս, քանի որ որեւէ այլ մոտեցում բարդություններ էր առաջացնելու Հայաստանի եւ Ղարաբաղի համար եւ մերժվելու էր: Այնպես, որ այսօր կա միջին ճանապարհ, բայց դժբախտաբար Ադրբեջանի

կողմից դեռեւս մերժվում է: Հուսով ենք, որ 99-ին մնալով այս ճանապարհին միջազգային հանրությունը կկարողանա Ադրբեջանին բերել բանակցությունների սեղանի շուրջ:

- Նախորդ եւ ներկա իշխանությունների ժամանակ լինելով արտաքին գերատեսչությունում, ինչպե՞ս կբնութագրեք արտաքին քաղաքականության սկզբունքային տարբերակումները եւ կայի՞ն անելիքներ, որոնք ժամկետային առումով չհասցրեցիք իրագործել:

- Փոփոխությունները 3 ուղղություններով են կատարվել: ԼՂՀ-ի, Թուրքիայի հետ մեր հարաբերությունների, իսկ 3-րդ ուղղությունը ավելի կոնցեպտուալ՝ տարածաշրջանում առավել գործնական քաղաքականություն վարելն է: Իհարկե կա նախորդի քաղաքականության շարունակությունը, բայց հիմնական փոփոխություններն այս ուղղություններով են ընթացել:

Տես էջ 3

ՀԻՆ ԴԱՎԹԱՐՆԵՐ

Երեւանի Կոնյակի գործարանային համալիրի աուդիտը

«Պեռնո Ռիկարը» մեղադրում է մեր կառավարությանը

Տարեվերջին «Ազգը» հայտնեց, որ Երեւանի Կոնյակի գործարանի գնորդ ֆրանսիական «Պեռնո Ռիկար» ընկերությունը բացի 28 մլն դոլար վարձավճարի ժամկետի հետաձգումից՝ մեր կառավարությանը ներկայացրել է մի քանի այլ պահանջ, որոնցից առավել կարեւորը նշյալ 28 մլն դոլարի նվազեցումն է 1,7 մլն դոլարով, քանզի «Պեռնո Ռիկարի» իրականացրած աուդիտից հետո պարզվել է, որ հիշյալ գործարանն ունի մոտավորապես 1,7 մլն դոլարի պարտք, որն ամրագրված չի եղել գործարքից առաջ: Նյութի հրապարակումից հետո «Ազգը» դիմեց տնտեսական եւ կառուցվածքային բարեփոխումների նախագահ Վահրամ Ավանեսյանին՝ պարզաբանելու ստեղծված իրավիճակը: Վահրամ Ավանեսյանը հաստատեց «Ազգի» տեղեկատվությունը կառավարական փակ նիստի վերաբերյալ, որ նա զեկուցել է Կոնյակի գործարքի շուրջ Հայաստանին սպասվող հնարավոր վտանգների մասին՝ ներկայացնելով կանխարգելիչ միջոցների ծրագիր: Առավել մանրամասնել նախարարը չցանկացավ, իսկ կառավարության իրազեկ իրավաբանական աղբյուրներից «Ազգին» հայտնի դարձավ, որ հիշյալ 1,7 մլն դոլարը գոյացել է ոչ թե Երեւանի Կոնյակի գործարանի աուդիտից, այլ վաճառքից առաջ Երեւանի Կոնյակի գործարանին երեք դուստր ձեռնարկությունները միավորելու հետեւանքով: Այգեւանի, Արմավիրի եւ Բուրաստանի գործարանները, որոնք միավորվեցին Երեւանի Կոնյակի գործարանին, ունեցել են այս պարտքը, եւ ինչ-ինչ պատճառներով հիշյալ փաստը չի ներկայացվել ֆրանսիական «Պեռնո Ռիկարին»: Ժամանակին Վահրամ Ավանեսյանը փաստում էր, թե ՀՀ կառավարությունը գումար չունի սեփականաշնորհումից առաջ միջազգային աուդիտ իրականացնելու համար, ինչն էլ պատճառ է դառնում միջազգային մրցույթով վաճառքի ենթակա ձեռնարկությունների գնի որոշակի նվազմանը:

Այսպիսով, «Մերիլ Լինչ» խորհրդավական ընկերությունը մասն չունի այդ պարտքի ի հայտ չգալու մեջ, դա մեր կառավարության կամ անփութության, կամ ոչ արհեստավարժության արդյունքն է, սակայն փաստն այն է, որ «Պեռնո Ռիկարը», դեռեւս չվճարած գործարքի անմիջական գումարը, խոցելի թիրախներ է գտնում մեզ համար:

Ն. Դ.

ԿԱՂՐԵՐ

Գեղամ Ղարիբջանյանը կստանձնի Իրանում ՀՀ դեսպանի պաշտոնը, Էդվարդ Նալբանդյանը՝ Ֆրանսիայում

Մոտ օրերս կհրապարակվեն Հայաստանի նախագահի հրամանագրերը Իրանի Իսլամական Հանրապետությունում եւ Ֆրանսիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպաններ նշանակելու վերաբերյալ: Այդ պետությունների կառավարությունները տվել են ագրեմանը սոցիալական հարցերի, առողջապահության եւ բնության պահպանության մշտական հանձնաժողովը: Ֆրանսիայում ՀՀ դեսպան է դառնում Էդվարդ Նալբանդյանը, որը ներկայումս ՀՀ դեսպանն է Եգիպտոսում եւ համատեղությամբ՝ Մարոկկոյում:

(համաձայնությունը) նրանց նշանակման համար: Այդ մասին տեղեկացրեց ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանն Արմենպրեսի մամուլի սրահում երեկ տեղի ունեցած հանդիպման ժամանակ:

Իրանում դեսպանի պաշտոնը կստանձնի Գեղամ Ղարիբջանյանը, որը գլխավորում է Ազգային Ժողովի

Փարիզում դեսպանի պաշտոնը թափուր է անցյալ տարվա մայիսից ի վեր, նախկին արտգործնախարար Վահան Փափազյանի, իսկ Թեհրանում՝ հուլիսից, Վահան Բայբուրդյանի հայրենիք վերադառնալուց հետո:

Նոր դեսպանների կենսագրականները՝ հաջորդիվ:

Տ. Լ.

ԱՄՆ-ը պատժամիջոցներ է մտցրել Ռուսաստանի երեք հիմնարկության դեմ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 13 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: ԱՄՆ-ի վարչակազմը երեքշաբթի օրը տնտեսական պատժամիջոցներ է մտցրել Ռուսաստանի երեք հիմնարկության դեմ, որոնց նա կասկածում է միջուկային ու հրթռային բնագավառներում Իրանի հետ համագործակցելու մեջ՝ ի խախտումն չտարածման ոլորտի միջազգային պայմանավորվածությունների:

Ինչպես հայտարարել է ազգային անվտանգության գծով ԱՄՆ-ի նախագահի օգնական Սեմյուել Բերգերը, դրանց թվում են հայտնվել Ռուսաստանի Մենդելեեւի անվան քիմիատեխնոլոգիական համալսարանը, էներգատեխնիկայի գիտահետազոտական ու կոնստրուկտորական ինստիտուտը, ինչպես նաեւ Մոսկվայի ավիացիոն ինստիտուտը:

Նշելով, որ ռուսաստանա-իրանական համագործակցության խնդիրն արդեն բազում տարիներ Վաշինգտոնի եւ Մոսկվայի կողմից քննարկվում են ամենաբարձր մակարդակով, նախագահի օգնականն ընդգծել է. «Մենք հստակորեն տվեցինք, որ վարչակազմը լիազորություններ ունի գործողություններ ձեռնարկելու այն հաստատությունների դեմ, որոնք խախտում են միջազգային ստանդարտները չտարածման բնագավառում, եւ մենք այդ լիազորությունները կօգտագործենք մեր անվտանգությունն ապահովելու համար»:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Միջազգային շուկայում նավթի գների անկումը շարունակվում է

ԷԴՄՈՆ ԲԵԳԻՆՅԱՆ

Արդեն ավելի քան մեկ տարի է, ինչ միջազգային շուկայում շարունակվում է նավթի գների անկումը: Թվում էր, թե ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի կողմից Իրաքի հրթռակոծումն իր ազդեցությունը կթողնի նաեւ նավթի գների վրա, սակայն ռմբակոծությունների հաջորդ օրն իսկ նավթի գների անկում արձանագրվեց: Եթե հիմք ընդունենք մասնագետների ու վերլուծաբանների այն տեսակետը, թե միջազգային շուկայում առաջարկի՝ օրական 1 միլիոն 500 հազար բարելի կրճատման դեպքում գների անկումը կկասեցվի, ապա Իրաքի նավթի արտահանման կատարյալ ընդհատումը միայն կհանգեցներ դրական տեղաշարժերի, ինչը գրեթե անհավանական էր, քանզի այս դեպքում նշանակում էր հարվածել նաեւ դաշնակից Թուրքիայի շահերին:



Տես էջ 5

digitised by A.R.A.R.@

ՊՐԿԵՏ

Կոմկուսը «հակակառավարական անօրինական իշխանություններին ոտնատակ տալու» կոչ է անում

Հունվարի 13-ին Հայկոմկուսի Երեւանի քաղաքային կոմիտեի նախաձեռնությամբ ցուցարարների մի ոչ մեծ խումբ ՀՀ վարչապետից պահանջում էր պատասխան տալ իրենց սոցիալական թվառ վիճակի համար: Ցուցարարները՝ հիմնականում տարեցներ, ՀՀ կառավարության շենքի առջեւ խստապահանջ պատասխաններից բացի թափահարում էին նաեւ իրենց «պարտքերի ցուցակները»: Իհարկե, ցուցարարների փոքրաթիվ լինելը չպետք է պայմանավորել նրանով, որ ներկայացված պահանջները՝ էլեկտրաէներգիայի սակագնի անորոշություն, հեռախոսավարձի բարձրացում, ապրիլի 1-ից սպասվող հացի թանկացում, միայն այնտեղ հավաքվածներին էին զայրացնում:

Հեռախոսավարձի վերջին բարձրացումը այս օրերին ընկալվում են բազմաթիվ կուսակցություններ ու կազմակերպություններ: Ընդունվում են որոշումներ, պահանջներ եւ ներկայացվում իշխանության տարբեր օղակներին: Սակայն, ի տարբերություն նրանց, ցուցարարներին առաջնորդող կոմկուսի ներկայացուցիչները հայտնեցին, որ իրենք «անօրինական» իշխանություններին ոչ պահանջ եւ ոչ էլ պատվիրակություն ներկայացնելու ցանկություն չունեն: Վարչապետն ինքը պետք է իջնի ու պատասխան տա ժողովրդին: Նույնը ասվեց նաեւ ՀՀ վարչապետի օգնականի տասը հոգանոց պատվիրակությամբ վարչապետին ներկայանալու առաջարկին ի պատասխան: Ավելին, կոմկուսի Երեւանի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար Յուրի Մանուկյանը, որն իր ասելով, ակամա էր լիդեր դարձել երեկ, վարչապետի ներկայանալու դեպքում էլ չերաշխավորեց նրա անվտանգությունը «էս ժողովրդի պայմաններում»:

Պրն Մանուկյանը հավաքվածներին կոչ արեց առաջին օրը բավարարվել կառավարության շենքի առջեւ մեկ ժամ մնալով, իսկ հաջորդ եւ հետագա բոլոր օրերին մարդկային կուսակումներն ավելացնելով, ժամը 14-ից հավաքվել կառավարության շենքի առջեւ այնքան ժամանակ, մինչեւ ողջ հանրապետությունը ոտքի կանգնի: «Թող իջնեն ժողովրդի աղտակը, ժողովրդի թուքումուրը ուտեն» ավելացրեց Երեւանի քաղկոմի առաջին քարտուղարը: Նա հայտնեց, որ համաձայն է մյուս կուսակցությունների կողքին կանգնել միայն այս հարցերի հետ կապված, այլ հարցերում ջանքեր միավորելն անհնարին է համարում: Բողոքի իր ծրագիրն է՝ «դուրս գալ եւ ոտնատակ տալ անօրինական, հակակառավարական իշխանություններին»:

Ս. Պ.

ՀԻՆ ՏՈՄԱՐՈՎ

Ամանորյա աղցան՝ եթերով, «Զինուժով» ու սակագներով

Հին տոմարով նոր տարին՝ հունվարի 13-ը, Հայաստանի ազգային հեռուստատեսությունը դիմավորեց նշանակալից նորամուծությամբ՝ հեռուստաեթերի էական երկարաձգումով՝ ի հաշիվ ցերեկային հեռարձակումների: Ողջունելով ԱՀ ղեկավարության նոր նախաձեռնությունը, անփորձանք եւ բովանդակալից եթեր ենք մաղթում հեռուստատեսության մշակներին,

հույս հայտնելով, որ եթերաժամերի «ֆանակի» ավելացումը չի ուղեկցվի որակի անկումով: Վատ չէր լինի, իհարկե, եթե եթերի տեւողությունը պահպանվեր, փոխարենը բարելավելով հաղորդումների որակը, որն առայժմ, ցավոք, ճանապարհ ունի անցնելու՝ միջին հեռուստադիտողին լիովին գոհացնելու համար: Որքան էլ ցավալի է, հեռուստահաղորդումների «դինամիկան» շարունակվում է ռաբիսացման եւ օտարամոլության, «փողոցին» հարմարվելու, ոչ թե «փողոցի» մակարդակը տեղաշարժելու հունով: Սա նկատելի էր հատկապես տոնական օրերին, երբ հեռուստադիտողի տոնական տրամադրությունն էական «հեռուստաամրապնդում» չստացավ: Հիմնականում տաղտկալի, անդեմ համերգային ծրագրերին հաջորդում էին նույնքան անդեմ ֆիլմերը՝ ընդմիջվելով ամանորյա տոնը միայն երբեմն հիշեցնող տոնական հաղորդումներով, որոնցում, սակայն, զգալի մաս էին կազմում էժանագին սրամտությունները:

Ամենատոնական հաղորդումը, որքան էլ զարմանալի է, հունվարի 2-ի «Զինուժի» երգիծական բողարկումն էր՝ «ավագ լեյտենանտ» Չմեռ պապով եւ բանակային անցուդարձերի զվարճալի մեկնաբանություններով ու երկխոսություններով: Հաղորդումը մեծապես շահել էր երգիծաբան Սամվել Բաղդասարյանի մասնակցությունից, որի նմանակումները վաղուց արդեն արժանացել են մեր հայրենակիցների ջերմ ընդունելությանը: Ուշագրավ է, որ «Զինուժն» առաջին անգամ փորձեց կամուրջ ստեղծել բանակի եւ ժողովրդի միջեւ՝ ոչ թե ուժի, այլ հումորի դիրքերից առնչվելով նրան, փորձելով դուր գալ «մասսաներին». ինքնին դրական միտում, որ նշանակում է թերեւս, որ ժողովրդի գործոնը կամաց-կամաց սկսում է գործել: (Լավ կլիներ, իհարկե, եթե շատերի կարծիքով գերլավատեսական այս դիտարկումը հաստատվեր հեռախոսավարձի բարձրացումը կասեցնելու պատմական փաստով, ֆանզի Արմենտելի սակագնային ախորժակի շուրջ բարձրացած հիրավի համաժողովրդական աղմուկը վկայում է, որ եթե հայերս կարող էինք մարսել «կոնյակ» օտար (ֆրանսիական) անունով պատմության մեջ մտած մեր ազգային հարստության օտարումը, ապա հեռախոսային զփումների սահմանափակման ողբերգությանը դիմանալ անկարող ենք):

Շնորհավորելով մեր բոլոր հայրենակիցների (անշուշտ, նաեւ ազգային հեռուստատեսության աշխատակիցների) հին Ամանորը, ցանկանք, որ բանակը շարունակի մերձենալ ժողովրդին («Սմբատիչի» չարագուշակ, «կործանարար» կանխատեսումներին հակառակ), ազգային հեռուստատեսությունը, եթերաժամային նոր բնագծեր հաղթահարելուց զատ ծերբազասվի օտարամուս եւ «փողոցային» շեշտադրումներից, Հայաստանի կառավարությունն էլ, ի բարորություն Արմենտելի բաժանորդների, շահի առաջիկա «ճակատամարտը» ընկերության ղեկավարության հետ եւ, ի հավելումն, մեկընդմիշտ սառեցնի էլեկտրաէներգիայի սակագների բարձրացման պայթյունավտանգ գործընթացը:

ԻՍԻԴ ՊՈՂՈՍՅԱՆ

Հայաստանի դեմոկրատական կուսակցությունն այսօր Արմենտելի շենքի մոտ հրավիրում է պիկետի

ԵՐԵՎԱՆ, 13 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը (ՀԴԿ) հունվարի 14-ին, ժամը 11-ին Արմենտել հայ-հունական համատեղ ձեռնարկության շենքի մոտ հրավիրում է պիկետի: Բողոքն ուղղված է հեռախոսակապի ծառայությունների սակագների բարձրացման դեմ: Այս մասին հունվարի 13-ին ՀԴԿ-ի գրասենյակում կայացած ասուլիսում հայտարարեցին կուսակցության փոխնախագահ Կարինե Դանիելյանը եւ նախագահության անդամ Վահե Ստեփանյանը:

Կուսակցության կենտրոնական խորհրդի՝ այդ կապակցությամբ տարածված հայտարարության մեջ ասվում է, որ «Արմենտելը» բազմապատիկ բարձրացնում է հեռախոսակապի ծառայության սակագինը՝ չկատարելով 1998 թ. հեռահաղորդակցության ցանցում ավելի քան 50 մլն ԱՄՆ դոլարի ներդրում անելու մասին իր իսկ ստանձնած պարտավորությունը: Ըստ ՀԴԿ-ի, ռազմավարական սխալ է ազգային անվտանգության համակարգում բացառիկ նշանակություն ունեցող ոլորտի վաճառքը այլ երկրի պետական ընկերությանը:

ՀԴԿ-ն Արմենտելի ղեկավարությանն առաջարկում է վերանայել հեռախոսակապի ծառայությունների գների բազմապատիկ բարձրացման մասին որոշումը:

ՀԴԿ-ն գտնում է, որ ՀՀ ԱԺ-ն կարճ ժամկետում պետք է ընդունի ՀՀ հակամենաշնորհային օրենք, առաջարկում է ՀՀ կառավարությանը վերանայել Արմենտելի հետ կնքված պայմանագրի պայմանները, հեռախոսային ծառայությունների գները համապատասխանեցնել բնակչության վճարունակությանը:

«Հակառակ դեպքում, ՀԴԿ-ն իրեն իրավունք է վերապահում կոչ անել սպառողներին՝ դիմելու իրենց իրավունքների պաշտպանման գործողությունների»:

«Լոռու մարգ» թերթը վստահություն է ներշնչում ընթերցողներին

Ավելի քան 5 ամսվա ընդմիջումից հետո երեկ լույս տեսավ «Լոռու մարգ» թերթի առաջին համարը: Ինչպես տեղեկացանք թերթի գլխավոր խմբագիր, մեր սեփական թղթակից Մանվել Միկոյանից, «Լոռու մարգը» հաղթահարում է նախկինում կուտակված դժվարությունները, եւ կայուն երաշխիքներ կան, որ թերթն այլեւս ընդհատումներով չի հրատարակվի: «...Թերթի ստեղծագործական կազմը կաշխատի չդավաճանել լրագրողի սկզբունքներին եւ հետու մնալ ծուռ հայելիների շահանդեսից», մասնավորապես ասված է խմբագրականում: Մնում է հաջողություններ մաղթել թերթին:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Մարտունիում ծնելիության ցուցանիշը բարձրացել է

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում, որտեղ տարիներ շարունակ հանրապետության մասշտաբով բազմազավակ ընտանիքները մեծ թիվ էին կազմում, 90-ական թվականներից սկսած, ծնելիության մակարդակը կտրուկ նվազեց: Պատճառը սոցիալական ծանր իրավիճակն էր, որի պատճառով, ցավոք, հայտնվեցին նաեւ շատ երիտասարդ, «աճող» ընտանիքներ: Սակայն, ինչպես տեղեկացանք «Մարտունու ծննդատուն» պետական ձեռնարկությունում, վերջին 2 տարիներին սկսել է նկատելի դառնալ աճի միտումը, որը պայմանավորված է ոչ թե ազգաբնակչության սոցիալական վիճակի բարելավմամբ (այդ ուղղությամբ դրական տեղաշարժերն ապագայում աննշան են), այլ նշված բուժհիմնարկի ինքնուրույն գործունեությամբ: Այն հանրապետության եզակի ձեռնարկություններից է, որը հագեցած է արտասահմանյան նորագույն տեխնիկա-սարքավորումներով, ապահովված է դեղորայքով, փափուկ եւ կոշտ գույքով, սպասարկման համար ստեղծվել են անհրաժեշտ պայմաններ: Այդ ամենը, որպես մարդասիրական օգնություն, հիվանդանոցին տրամադրել է իտալական «Իկո» կազմակերպությունը, որի ներդրումների հաշվին կատարվել են նաեւ շենքի վերանորոգման եւ հարդարման աշխատանքները: Հիվանդանոցն ապահովված է կոյուղիով, տաք եւ սառը ջրամատակարարմամբ, իսկ ծննդաբերի ամիսներին նաեւ ջեռուցմամբ: Զուգահեռ գործում են պոլիկլինիկան եւ վճարովի որոշ ծառայություններ: Արդյունքում՝ ծնունդների թիվը 1997 թվականի 980-ի փոխարեն անցած տարի հասել է շուրջ 1200-ի: Դրան նպաստում են նաեւ թե քաղաքային, եւ թե գյուղական բնակավայրերում համայցերը, որոնց ընթացքում կատարվում են ամբուլատոր հետազոտություններ, ցուցաբերվում խորհրդատվական ծառայություններ: Այդպիսով, նվազել է նաեւ տնային ծնունդների թիվը, որը վերջին մի քանի տարիների անցանկալի, սակայն տարածված երեւույթներից է: Հիմնախնդիրը դեռեւս չի վերացվել հեռավոր գյուղերում, որտեղ չկա հեռախոսակապ, թեեւ ծնունդօգնության համար շատ օգնությունը մեր ենք տրամադրում: Նշենք, որ Վարդենիկում վերջերս բացված ծննդատունը եւս կնպաստի տնային ծնունդների թվի նվազմանը:

Ինչ վերաբերում է բյուջեից տրվելիք ֆինանսավորմանն, ապա տնօրենության կարծիքով այն լիովին բավարարում է բարձր մակարդակով ծնունդօգնության կազմակերպմանը: Վերջինիս հավաստմամբ, ծնունդները ընդունվում եւ դուրս են գրվում անվճար:

Փաստն ուրախալի է, տա Աստված, որ փորձն օրինակ հանդիսանա, եւ ծնելիության ցուցանիշի բարձրացում նկատվի ոչ միայն Մարտունիում...

ՆԵԼԼԻ ՍԱՀԱԿՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 8 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի Խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԻԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՈՐԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 562941
Apple Macintosh
համակարգչային շարուածք «Ազգ» թերթի
Յուրաքանչյուր «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

«1998 թ. մեզ բազմիցս ուզում էին ստիպել իշխանությունների հետ եւ դրա պատճառը երկու նախարարներն էին (իմա՝ գիտության եւ կրթության նախարար Լեւոն Մկրտչյանն ու մշակույթի նախարար Ռոլանդ Շառոյանը- Ն. Դ.), բայց ո՞վ ասաց, որ մենք այս կառավարության հետ համաձայն ենք բոլոր հարցերում: Մենք մեր անհամաձայնությունը չենք թաքցրել եւ հայտնել ենք բացահայտ», փաստեց ՀՅԴ ԳՄ խաղաղական ներկայացուցիչ եւ հանրաքվեության նախագահ Ռոբերտ Քոչարյանի խորհրդական Վահան Հովհաննիսյանը երեկ ՀՅ Դաշնակցության Գերագույն մարմնի կազմակերպած ամփոփիչ ասուլիսում: ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչներ Վահան Հովհաննիսյանը եւ Արմեն Ռուսամյանը պնդեցին, որ Հայաստանում իշխանափոխությունն ավարտված չէ: Վահան Հովհաննիսյանը մասնավորեց՝ Հայաստանում կառավարությունը չի ծեւավորվում հենվելով խորհրդարանում ունեցած ուժերի հարաբերակցության վրա. «Եթե մենք ունենք երկու նախարար, դա ժողովրդի մեջ առկա վստահության արդյունքն է, որը չունի իրավական ծեւակերպում, որովհետեւ Ազգային ժողովում մենք ունենք միայն մեկ պատգամավոր», եզրափակեց նա: Վահան Հովհաննիսյանը նշեց, որ կառավարության անդամ դարձած նախարարներն իրենց կուսակցական ծրագրահենքով չեն առաջնորդվում, եւ նրանց նպատակը կուսակցական ծրագրի իրականացումը չէ, ուստի ՀՅ Դաշնակցությունն այսօր ազատ է ինքնադատելու եւ գնահատելու հայաստանյան իշխանության ներկա ուղեգիծը:

ՀՅԴ խաղաղական իր ասուլիսում ամենից առաջ ցանկացավ արտահայտել արտաքին խաղաղականության, ավելի ստույգ՝ արտերկրում ունեցած հենարանների, ռազմավարական դաշնակիցների գործոնը: Դաշնակիցները Ռուսաստանում են եւ Իրանում: Վահան Հովհաննիսյանը նախ անդրադարձավ Իրանում տեղի ունեցած «Իրան-Հայաստան կամրջեն այսօր եւ վաղը» խորհրդաժողովի արդյունքներին: Նա ընդգծեց. «Ես եղա բավական անկեղծ եւ ասացի, որ մեր ներկա հարաբերությունները չեն կարող բավարարել մեզ»: Իրան կատարած այցելությունը, որ համընկավ նշված խորհրդաժողովի հետ, ըստ Վ. Հովհաննիսյանի, մեծ արձագանք է ունեցել, որի առաջացյալն Ադրբեջանի բացասական վերաբերմունքն էր: Վահան Հովհաննիսյանը նշել էր, որ մանրածախ առեւտրի արդի ակտիվությունը չի կարող բավարարել մեր երկու պետություններին, եւ պետք է համագործակցության խորքային ուղի գտնել: Երկրորդ գործընկերը Ռուսաստանն է, որտեղ ՀՅԴ-ն, ըստ Վահան Հովհաննիսյանի եւ Արմեն Ռուսամյանի, լուրջ հենակետեր ունի: Վերջերս Վ. Հովհաննիսյանը եւ Ա. Ռուսամյանը եղել են Մոսկվայում՝ հանդիպելով Մոսկվայի քաղաքագլուխ Յուրի Լուժկովի հետ: ՀՅԴ ներկայացուցիչները տեղեկացրին, որ այս հանդիպումը ոչ այնքան ՌԴ մայրաքաղաքի քաղաքապետի հետ էր, որքան «Օտեչեստվո» հասարակական-քաղաքական շարժման ղեկավարի հետ (ենթադրվում է, նաեւ ՌԴ նախագահության աթոռը թեկնածու Լուժկովի): Արմեն Ռուսամյանը հայտնեց, որ Լուժկովի «Օտեչեստվո» միությունը, ինչպես նաեւ Ռուսական հայրենիքների կոնգրեսը, որ ղեկավարում է Դիմիտրի Ռոգոզինը, ՀՅԴ-ի հետ ունեն գաղափարական աղերսներ: Արմեն Ռուսամյանն ասաց, որ իրենք պատրաստ են աջակցելու «Օտեչեստվոյին» մուտք գործելու Սոցիներն, որի անդամն է ՀՅԴ-ն 1907 թ.-ից:

ՀՅԴ-ն եւ Վազգեն Սարգսյանի «Հանրաքեւեականը» դաշնակիցներ

Ի պատասխան «Ազգի» հարցի՝ Վահան Հովհաննիսյանը նշեց, որ Վազգեն Սարգսյանի գլխավորած «Հանրաքեւեական» կուսակցության միջեւ սոցիալական եւ ազգային գաղափարախոսության ոլորտում դրական եզրեր կան, եւ այդ կուսակցությանը ՀՅԴ-ն համարում է իր պոտենցիալ դաշնակիցը: Վ. Հովհաննիսյանը կատարեց բազմաճանաչ մի դիտարկում, ըստ որի՝ երկրապահների դերը կուսակցության մեջ դադարում է լինել վճռորոշ, «Երկրապահ» կամավորականների միության հետ ՀՅԴ-ն ունեցել է եւ ունի շատ դրական հարաբերություններ՝ տարածայնություններով հանդերձ: Այդ տարաձայնությունները ոչ միայն անցյալի, այլեւ ներկա ժամանակաշրջանի արդյունքն են, բայց ՀՅԴ-ն սպասում է նորացված «Հանրաքեւեականի» վերջնական ձեւավորմանը եւ ծրագրին: Մենք հիշեցրինք, որ Հայաստանի տնտեսական քաղաքականության գնահատման առումով «Հանրաքեւեական» կուսակցությունը կամ շարժումը գտնվում են նույն ուղեծրում: Վազգեն Սարգսյանը «Հանրաքեւեական» կուսակցության խորհրդաժողովում մինչ այժմ իրականացվող տնտեսական քաղաքականությունը բնորոշեց իբրեւ «վայրի եւ անափ լիբերալիզմ», որը Հայաստանին չի կարող բերել ազգային նպատակների իրականացման հանգրվան: ՀՅԴ-ն եւս համոզված է, որ ներկայումս իրականացվող տնտեսական քաղաքականությունը պետք է արմատապես փոխվի: «Ազգի» երկրորդ հարցին պատասխանելով՝ Արմեն Ռուսամյանը հավաստեց, որ 1999 թ. ավանդական այս կուսակցությունը ցանկանում է դարձնել իշխանափոխության ավարտի տարի. իշխանափոխության ավարտ ասելով՝ ՀՅԴ-ն նկատի ունի օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների նորացումը: Գործադիր իշխանության ոլորտում, ըստ Վահան Հովհաննիսյանի, փոխվել են միայն բուրգի ամենավերին օղակները, մնացյալն անփոփոխ է, այսինքն՝ համակարգը նույնն է, եւ շարունակվում են նույն սխալները: Օրենսդիր իշխանության մեջ վիճակն անփառունակ է նույն անընդունելի ընտրություններով ծեւավորված ԱԺ-ն, որը ներկայացուցչական չէ: «Առազգային եւ հակաժողովրդական» ուղեգիծը, ըստ ՀՅԴ-ի, 1998 թ. իշխանափոխությամբ վերանայվեց, բայց այդ ուղղությամբ կատարված քայլերն անբավարար են՝ Արմեն Ռուսամյանը հույս ուներ, որ ԱԺ գալիք ընտրությունները կանցնեն ազատ, արդար, եւ Հայաստանը կունենա իրոք ներկայացուցչական խորհրդարան:

Պատասխանելով «Առավոտ» օրաթերթի հարցին՝ ՀՅԴ-ն բացահայտեց ԼՂՀ պատգամավորության նախագահ Սամվել Բաբայանին Հայաստան հրավիրելու եւ նրա տեսակետների հանդեպ ունեցած իրենց վերաբերմունքը: ՀՅԴ-ն չի կասկածում, որ Ղարաբաղը պետք է ունենա. ա) առաջնահերթ տնտեսական զարգացում. «Արցախում ապրելը պետք է առավել ծերոնտու լինի, քան Հայաստանում», բ) ԼՂՀ հանգուցալուծման համար պետք է կատարվեն զիջումներ, բայց այդ զիջումները պետք է լինեն Ղարաբաղի հետ համաձայնեցված. «Չկրկնենք նախորդ փորձը, երբ Երեւանում վեց հոգի իրենց կաբինետներում ինչ-որ լուծումներ էին փնտրում»:

Տղամարդ գտնվեց՝ միայն Ատոմ Բլեյանը

Վահան Հովհաննիսյանն ըստ արժանվույն գնահատեց Ատոմ Բլեյանի քայլը՝ դատական գործ հարուցելու ՀՅԴ-ի դեմ հայտնի հանրահավաքում հնչած մեղադրանքների առիթով: ՀՅԴ-ն հիասթափված է: Տասնյակ ամբաստանյալներից տղամարդ գտնվեց լոկ Ատոմ Բլեյանը: Տղամարդկությունն այս պարագայում նշանակում էր դատի տալ մեղադրանքը հրապարակողներին: Վահան Հովհաննիսյանն ու Արմեն Ռուսամյանը հավաստեցին, որ իրենք ունեն մի քանի տասնյակ նոր ամբաստանյալների անունների ցուցակ, որը, սակայն, չեն ցանկանում հրապարակել, քանզի սպասում են նախ իրավապահ մարմինների, ապա իշխանության արձագանքին, ինչպես նաեւ ամբաստանյալների աղաչախարանքին. գուցե նրանք ինքնակամ կգան վզջման. «Սպասում ենք, որ ամաչեն եւ թալանվածը բերեն բյուջե»:

Շաբաթ ՀՅԴ-ն կհանդիպի վարչապետ Արմեն Դարբինյանի հետ՝ նրան ներկայացնելով իր դիրքորոշումները Հայաստանի տնտեսական առաջընթացի վերաբերյալ:

ՀՅԴ-ն, այսպիսով, ընտրություններից առաջ ներկայացրեց իր համակրանքներն ու հակակրանքները՝ հստակ իրատեսությամբ. «Մենք հեռու ենք այն մտից, թե մեկ-երկու հայտարարությամբ կամ նախագծուցագծմամբ երկրի ուղեգիծը կփոխվի»: Ամենակարեւորը՝ ՀՅԴ-ն պաղլամենտական եւ ոչ նախագահական հանրաքեւեության կողմնակից է: Այս տարին ՀՅԴ-ն դիմավորեց պատմական մի ցենքում, որի նկուղային հարկում ժամանակին բանտ է եղել, այսօր այն գաթակոդիչ հանդիպավայր է, ուր եւ մեզ հրավիրեցին տոնելու հին տոմարով նոր տարին: Կարծիք գինով, որ երկիմաստ խորհրդանշում է ՀՅԴ բոսոր դրոշը՝ «Ազատություն կամ մահ» կարգախոսով:

ՆԱԲԵԼ ՀՈՎԱՆԻՍՅԱՆ

ԱՍՈՒԼԻՍ

«Ես եղա բավական անկեղծ»

Արշանագրեց ՀՅԴ ԳՄ խաղաղական ներկայացուցիչ Վահան Հովհաննիսյանը

Ազգի՝ հարցազրույց

Օսկանյանն ակնկալում է դիվանագիտական նոր դրական...

Սկիզբը էջ 1

Տարվա ընթացքում այլ խնդիրներին զուգահեռ ցեցը մեծապես դրվեց տարածաշրջանի համագործակցության վրա: Հայաստանն իր անվտանգությունը, տնտեսական զարգացումը տեսնում է այս հայեցակետի մեջ եւ վերջին 7-8 ամիսների արդյունքները դրական են: Ինչ վերաբերում է Թուրքիայի հետ մեր խաղաղականության ցեցակի փոփոխությանը, ապա կարծում եմ, հարաբերությունները պետք է լինեն երկկողմանի: Հայաստանն այն հարցերում, որ ընդառաջում է, ակնկալում է նաեւ Թուրքիայի կողմից որոշ հարցերի ընդառաջում եւս: Հայաստան-Թուրքիա հարաբերություններն ընդհանրապես չպետք է կապվեն ԼՂՀ-ի հարցին: Այս առումով առաջընթաց բեղեռ չարձանագրվեց, բայց մեր խաղաղականության մեջ որոշ հստակեցում եղավ:

Հուսով ենք, որ 99-ին հիշյալ հիմունքներից ելնելով Թուրքիայի հետ երկխոսության մեջ կմտնենք: Տեղաշարժեր արդեն կան: Առաջին փոփոխները հաստատվել են, եւ 99-ին կարծում եմ նոր տեղաշարժեր կլինեն:

98-ը հատկանշական էր նաեւ դեռի եվրոպական ուղղվածության որոշ տեղաշարժերի առումով: Եվրախորհրդին Հայաստանի անդամակցության խնդիրը փորձում էինք լուծել, բայց ԼՂՀ-ի հարցում տեղաշարժ չլինելու պատճառով գործընթացը դեռեւս ձգձգվում է: 99-ին հավանաբար Հայաստանը կդառնա ԵԽ-ի անդամ:

Դեկտեմբերին Հայաստան-Եվրամիություն հանձնաժողովի վերջին հանդիպումն անցկացրեցինք: 99-ին հարաբերությունները նոր որակ կստանան: Ուժի մեջ է մտնելու համագործակցության եւ գործընկերության պայմանագիրը, որը ներառում է Հայաստան-Եվրամիություն քաղաքական երկխոսություն, ինչը կնպաստի ինտեգրացման գործընթացի առավել զարգացմանը: Տարվա ընթացքում ընդարձակվել է նաեւ երկկողմ հարաբերությունների ցանցը: Այն երկրները, որոնց հետ դիվանագիտական հարաբերությունները որոշ մակարդակի է հասցվել, փորձելու ենք պահպանել եւ առավել խորացնել:

– Ադրբեջանը փաստորեն մերժում է «ընդհանուր պետության» գաղափարը, անգամ համարում քաղված, ինչը նշանակում է, որ բանակցությունները կրկին փակուղի են մտնում անժամկետ, համենայն դեպս մինչեւ Մինսկի խմբի կողմից նոր առաջարկների ի հայտ գալը: Սա Ադրբեջանի հստակ դիրքորոշումն է, ինչ եք կարծում, ժամանակը հօգուտ Ադրբեջանի չի՞ աշխատում:

– Ես գտնում եմ, որ ժամանակն այսօր հօգուտ որեւէ մեկի չի աշխատում: Նախ, որքան էլ Ադրբեջանը հայտարարի, թե գաղափարը քաղված է, հնարավոր չէ քաղել: Փաստ է: Աշխարհի գրեթե ամենաազդեցիկ երեք երկրներ սեղանին են դրել առաջարկ, որը պարունակում է ընդհանուր պետության գաղափարը, ինչը մեզ համար նշանակում է՝ առաջարկություն առանց նախապայմանների: Փաստորեն այս ծեւակերպումը շրջանցում է տարածքային ամբողջականության եւ ազգերի ինքնորոշման երկու կարեւոր սկզբունքների հակասությունը: Փաստորեն Ադրբեջանի մերժումը ինքնին կոմպրոմիսի գաղափարի մերժումն է: Իհարկե, մտահոգիչ է, քանի որ Ադրբեջանը եթե կոմպրոմիսի պատրաստ չէ, ապա այլընտրանքային մոտեցումը ռազմական գործողություններն են, որը մեզ համար խիստ մտահոգիչ է: Եթե նրանք խնդիր են դրել հարցը ռազմական ճանապարհով լուծել, նավթային եկամուտներով բանակ հզորացնել, ապա մեզ ուղղակի ստիպում եւ պարտադրում են առավել այլալուրջ լինել, համապատասխան քայլերի դիմել, որպեսզի կանխենք Ադրբեջանի նման ծրագրի իրականացումը:

– Շանտեսենք նաեւ թուրք-հայկական այլանսը, որին այս տարի բացառված չէ Ադրբեջանի միացումը:

– Ադրբեջանը միշտ էլ ցանկություն հայտնել է միանալու այդ այլանսին: Մեզ համար իրոք մտահոգիչ է: Որեւէ այլանսի կամ դաշինքի կազմավորումը մեր տարածաշրջանում տանում է տարածաշրջանի բեւեռացման, ինչը վտանգավոր երեւույթ է: Մենք հույս էլ չունենք կանխելու, պարզապես մտահոգություն ենք հայտնում եւ Իսրայել կատարած իմ այցի պատճառներից մեկն էլ այդ խնդրին անդրադառնալն էր: Պարզապես պետք է ավելի այլալուրջ լինենք, հետեւենք զարգացումներին:

– Դեռեւս ամիսներ առաջ առաջիր, որ օսարերկրյա մեր դեսպանություններում կադրային փոփոխություններ են սպասվում եւ կիրառելու եք 2+1 սկզբունքը: Մամուլում գրեթե ոչինչ չի հրապարակվել:

– 2+1 սկզբունքը կիրառվում է: Եղել են բազմաթիվ փոփոխություններ՝ Վաշինգտոնում, Կանադայում, Արգենտինայում, Ֆրանսիայում, Հալեպում, Վիեննայում, Դամասկոսում, Թեհրանում, Մոսկվայում: Չկա դեսպանություն, ուր փոփոխություն եղած չլինի: Պարզապես դեսպանների տեղաշարժը դանդաղ է ընթանում, քանի որ ագրեման ստանալու գործընթացը ժամանակ է պահանջում: Թեպետ Իրանում, Եգիպտոսում եւ Արգենտինայում դեսպանները փոխվել են:

– Անդրադառնամ ԵԱՀԿ-ՄԱԿ համագործակցությանը: Դեկտեմբերին կայացած հերթական նիստի ժամանակ ինքնակամ բնաբերվեց նաեւ ԼՂՀ-ի հիմնախնդիրը: Եվ քվեարկության ժամանակ ձայների ջախջախիչ մեծամասնությամբ ԼՂ-ը կրկին ճանաչվեց որպես Ադրբեջանի մաս:

– Հարցը այնպես է ներկայացվում, որ ՄԱԿ-ը ԼՂՀ-ն Ադրբեջանի կազմում ճանաչելու հասուկ որոշում է կայացրել: Այդպես չէ: Դա հերթական ԵԱՀԿ-ՄԱԿ համագործակցության շուրջ որոշումն է, որը արդեն մի քանի տարի անցկացվում է: Փաստորեն Ղարաբաղը աշխարհագրական առումով Ադրբեջանի մաս է ներկայացվում: Շնորհանակ, որ Ադրբեջանը ՄԱԿ-ի անդամ է ճանաչվել իր առաջադրած տարածքով: Խնդիրն այլ կլիներ, եթե որոշումը ծեւակերպվեր, որ ՄԱԿ-ը առաջարկում է կամ որոշում է Ղարաբաղը Ադրբեջանի կազմում ճանաչել: Պարզապես մեկնաբանությունը ճիշտ չէ: Ամեն տարի այդ ստանդարտ որոշումը ՄԱԿ-ում արվում է:

– 99-ին ի՞նչ փոփոխություններ են սպասվում եւ ձեր կանխատեսումները:

– Այս տարի աշխատանքները հիմնականում չորս ուղղություններով են շարունակվելու: Առաջինը՝ ԼՂ-ի խաղաղ կարգավորման խնդիրն է: Իհարկե, դժվար է կանխագուշակել հաջող քայլը: Պարզապես դրականն այն է, որ բանակցությունները հավասարաչափ կվերսկսվեն առանց նախապայմանների: Չի բացառվում նոր ծեւակերպումներ մտցնելը, բայց հուսով եմ, որ հաջող առաջարկները նույնպես կլինեն առանց նախապայմանների:

Երկրորդը՝ տարածաշրջանի խնդիրներն են: Հակամարտություններից անկախ, ցեցը պետք է դնել տարածաշրջանի համագործակցության վրա, փորձել Տրասեկայի եւ այլ ծրագրերի միջոցով Ադրբեջանի եւ տարածաշրջանի մյուս երկրների հետ համագործակցություն սկսել: Ընթացող գործընթացներում շատ կարեւոր է Թուրքիայի կառուցողական եւ դրական մասնակցությունը: Երեք հիմնական ուժեր՝ Ռուսաստանը, Իրանը, Թուրքիան նշանակալից դեր են խաղում տարածաշրջանի գործընթացներում: Եվ եթե համեմատենք, Թուրքիան առանձնանում է մյուս երկրներից, քանի որ ակնհայտ կողմնորոշվել է դեպի Ադրբեջան: Իրանը ավելի հավասարակշռված քաղաքականություն է վարում: Ռուսաստանը եւս, հակառակ մեր ռազմավարական գործընկերության, նորմալ հարաբերությունների մեջ է Ադրբեջանի հետ: Այս եռանկյունում փաստորեն Թուրքիան դիսբալանս է ստեղծում, ուստի եւ պետք է անել հնարավորինը երկխոսության, նաեւ այլ երկրների օգնությամբ հասնել նրան, որ Թուրքիան տարածաշրջանում հավասարակշռված քաղաքականություն վարի:

Երրորդը՝ երկկողմ հարաբերություններ են տարբեր երկրների հետ: Անցյալ տարի Ռուսաստանի հետ կառուցողական հարաբերությունները պահել բարձր մակարդակի վրա: Այս տարի զարգացնելու եւ խորացնելու ենք Վրաստանի, Իրանի եւ Արեւելքի երկրների հետ հարաբերություններն առավել վերընթաց զարգացումներով:

Չորրորդը՝ եվրոպական ուղղությունն է: Այս տարի Հայաստան-Եվրամիություն հարաբերությունները առավել կսերտացնենք եւ եթե հաջողվի դառնալ Եվրախորհրդի անդամ, ապա արտաքին քաղաքականության եւ ընդհանրապես գործընթացներում առաջընթաց է: Հակամարտական տարի է լինելու գլոբալ իրադարձությունների առումով: Այս տարի ՆԱՏՕ-ի եւ Եվրախորհրդի 50-ամյակն է, Ստամբուլում կայանալիք ԵԱՀԿ գագաթաժողովին ընդունվելու է Եվրոպայի 21-րդ դարի խարտիան: 99-ը նոր դարաշրջանի նախաբեմն է եւ ամրագրվելու է նոր աշխարհակարգի ծեւավորումը, որի հիման վրա ողջ մարդկությունը մտնելու է 21-րդ դար: Հայաստանն ուղղակի չի կարող զերծ մնալ գործընթացներից եւ որքան էլ փոքր, բայց համեստ ներդրումով կարծում եմ ազդեցություն կունենա, որպեսզի գործընթացները դրական անդրադառնան մեր ազգային շահերի եւ տարածաշրջանի վրա:

ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ

digitised by A.R.A.R.@

հետահայաց

Թալանվեց մեր ազգային հարստությունը

ՀՅԴ ԳՄ անդամ
ԱՐՄԵՆ ՈՈՒՍՏԱՄՅԱՆ

ա) Տնտեսական բարեփոխումները խիստ դանդաղ են իրականացվում:

Թե ինչպիսի տնտեսություն ժառանգվեց ՀՀ նոր իշխանություններին, գիտենք բոլորս: Բայց Ռ. Քոչարյանի նախընտրական ծրագրով նախատեսված տնտեսական բարեփոխումներն էլ, ցավոք, դանդաղ են առաջ ընթանում: Եվ դրա հիմնական պատճառը հանրապետությունում սվբերային տնտեսության գոյությունն է դեռեւս մեծ չափով: Հայաստանի կապիտալի մեծ մասը փաստորեն «սվբերի» մեջ է, չի ծառայում պետության շահերին, տնտեսության զարգացմանը՝ ստեղծելով գերբեւեռացված վիճակ: Մի կողմից գերհարուստացած մարդիկ են, մյուս կողմից՝ ահավոր մեծ քանակությամբ աղքատ զանգված: Ասել է թե՝ մեզ մոտ բացակայում է միջին խավը, որը քաղաքակիրթ երկրներում պետության սոցիալ-տնտեսական զարգացվածության ցուցանիշն է:

Սվբերային տնտեսության դեմ պիտի պայքարել բոլոր միջոցներով, ընդհուպ ուժային: Տնտեսության մեջ չպիտի լինեն մենաշնորհյալներ, արտոնյալներ, հովանավորյալներ, այլապես հարկային, վարկային, մաքսային, ներդրումային ցանկացած քաղաքականություն դատապարտված է ձախողման:

Իհարկե, ընդունված է հանրապետության տնտեսության մեջ լուրջ առաջընթացի բացակայությունը կապել շրջափակման եւ արցախյան հարցի անորոշության հետ: Կասկածից վեր է, որ վերջին խնդիրների լուծումը լուրջ խթան կհանդիսանա մեր տնտեսահարաբերություններում: Բայց կան դեռեւս նախկին իշխանությունների օրոք արված հաշվարկներ, որոնց համաձայն տնտեսության այսօրվա վիճակը հնարավոր չէ բացառապես պայմանավորել շրջափակման եւ արցախյան խնդրով: Ըստ այդ հաշվարկների, եղած հնարավորությունները, կապերն այսօր էլ թույլ կտան էական աճ գրանցել տնտեսական կյանքում՝ ճիշտ ծրագրեր մշակելու, սվբերային տնտեսությունը եւ այդ բնագավառի մյուս խոչընդոտները վերացնելու դեպքում:

բ) Սեփականաշնորհումն ամբողջի էր:

Սեփականաշնորհումը, որը մենք գնահատում ենք հանցագործ մեթոդներով անցկացված, ըստ էության վերածվեց ազգային հարստության թալանի, որի արդյունքում արդյունաբերության հենասյուները մասնվեցին անգործության:

Ամբողջի սեփականաշնորհման հետեւանքները վերացնելու, արդյունաբերությունը խթանելու, նոր աշխատատեղեր ստեղծելու համար պիտի վերակառուցել հարկային եւ մաքսային համակարգերը, մշակել ճիշտ ներդրումային եւ վարկային քաղաքաշինություն: Սրանց իրականացումը պետությանը թույլ կտա զարգացման ներուժ ունեցող ձեռնարկություններին աջակցելով արագացնել սնանկ հայտարարել չաշխատող սեփականաշնորհված օբյեկտները: Ի վերջո դրանք ես կգնվեն պետության կողմից՝ նոր պայմաններով նորից սեփականաշնորհվելու: Հողի սեփականաշնորհման ընթացքում թույլ տրված կոպիտ սխալները եւս շտկում են պահանջում: Պիտի ստեղծել արդյունավետ պայմաններ գյուղում ֆերմերային տնտեսության ձեւավորման, զարգացման համար: Պիտի բարելավել վերամշակման եւ մթերման ոլորտների աշխատանքները:

Այնպես որ, անկախ շրջափակումից եւ արցախյան հարցից, խնդիրներ կան, որոնք հնարավոր է եւ պետք է լուծել այսօր՝ էապես բարելավելով հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը:

գ) Սվբերային կապիտալը Հայաստանում հասնում է 900 մլն դոլարի:

Անօրինական եկամուտների մուտքը եւ եկամուտների կազմակերպված ձեւով վճարումից խուսափելը դարձել են հանցավոր բիզնեսի խոշոր «բնագավառներ»: Հանրապետությունում հանցավոր խմբավորումների կողմից յուրացված սվբերային կապիտալի օգնությամբ, որը հասնում է 900 մլն դոլարի, ձեւավորվում է անօրինական ճանապարհով հարստանալ ձգտող քրեական կազմակերպությունների ցանց: Միլիոնների հարստություն է ստեղծվում պետական ձեռնարկություններից դրամական միջոցների եւ նյութերի տեղափոխման քրեական գործարքների, անօրինական բանկային ու վարձույթային գործառնությունների, հարկերից խուսափելու ճանապարհով:

դ) ՀՀ տնտեսության լծակները՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների ձեռքին:

Այսօր արդեն ակնհայտ է, որ հանրապետության տնտեսական կառավարման լծակները գտնվում են միջազգային ֆինանսական կազմակերպությունների ձեռքին՝ ի դեմս Միջազգային արժութային հիմնադրամի, Համաշխարհային բանկի եւ այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների: Արմատական տնտեսական եւ ոչ մի խնդիր Հայաստանի կառավարությունը չի կարող լուծել առանց Միջազգային արժութային հիմնադրամի հետ դրանք համաձայնեցնելու:

Մեր տնտեսական քաղաքականությունը վերանայման կարիք ունի

«Երկրապահ» պատգամավորական խմբի քարտուղար
ՀԵՐՄԻՆԵ ՆԱՂԴԱԼՅԱՆ

ա) Սեփականաշնորհումը ինքնանպատա՞կ, կամ ինչպե՞ս ես, սեփականաշնորհված ձեռնարկություն:

Այսօր արդեն պարզ է, որ ՀՀ սեփականաշնորհման ընթացքում վարած քաղաքականությունը վերանայման, վերաիմաստավորման կարիք է զգում: Այստեղ պիտի կարեւորել սեփականաշնորհման մարդասիրական ուղղությունը: Ինչպես հայտնի է, ամենաշատ տուժեցին բնակչության խնայողությունները: Տեղի ունեցավ հասարակության սոցիալ-տնտեսական ծայրահեղ բեւեռացում՝ գերհարուստների (4,7 տոկոս), հարուստների (8-9 տոկոս) եւ աղքատների:

բ) ՀՀ սեփականաշնորհումը լուծեց քաղաքական խնդիր:

Սեփականաշնորհման անցկացումը մեզանում ուղեկցվեց քրեական խոշոր չարաշահումներով: Այն լուծեց ոչ թե տնտեսական, այլ քաղաքական խնդիր, որի նպատակը սեփականության վերաբաշխումն էր եւ նոր դասակարգի՝ այսպես կոչված սեփականատերերի ստեղծումը: Գոնեիկ մեթոդներով հանրային սեփականությունն անցավ արկածախնդիր, որպես կանոն հանրապետության ղեկավարությանը մոտ կանգնած խմբերի ձեռքը: Ոչ մի բանվոր, ոչ մի ակադեմիկոս մինչեւ օրս սեփականատեր չի դարձել:

Ի դեպ, ըստ ուսումնասիրությունների, ձեռնարկությունների ճնշող մեծամասնությունը սեփականաշնորհվել է 800-1000 եւ ավելի անգամ նվազեցված գներով:

գ) Սվբերային կապիտալը Հայաստանում հասնում է 900 մլն դոլարի:

Անօրինական եկամուտների մուտքը եւ եկամուտների կազմակերպված ձեւով վճարումից խուսափելը դարձել են հանցավոր բիզնեսի խոշոր «բնագավառներ»: Հանրապետությունում հանցավոր խմբավորումների կողմից յուրացված սվբերային կապիտալի օգնությամբ, որը հասնում է 900 մլն դոլարի, ձեւավորվում է անօրինական ճանապարհով հարստանալ ձգտող քրեական կազմակերպությունների ցանց: Միլիոնների հարստություն է ստեղծվում պետական ձեռնարկություններից դրամական միջոցների եւ նյութերի տեղափոխման քրեական գործարքների, անօրինական բանկային ու վարձույթային գործառնությունների, հարկերից խուսափելու ճանապարհով:

դ) ՀՀ տնտեսության լծակները՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների ձեռքին:

Այսօր արդեն ակնհայտ է, որ հանրապետության տնտեսական կառավարման լծակները գտնվում են միջազգային ֆինանսական կազմակերպությունների ձեռքին՝ ի դեմս Միջազգային արժութային հիմնադրամի, Համաշխարհային բանկի եւ այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների: Արմատական տնտեսական եւ ոչ մի խնդիր Հայաստանի կառավարությունը չի կարող լուծել առանց Միջազգային արժութային հիմնադրամի հետ դրանք համաձայնեցնելու:

Մեր տնտեսական քաղաքականությունը վերանայման կարիք ունի

«Երկրապահ» պատգամավորական խմբի քարտուղար
ՀԵՐՄԻՆԵ ՆԱՂԴԱԼՅԱՆ

ա) Սեփականաշնորհումը ինքնանպատա՞կ, կամ ինչպե՞ս ես, սեփականաշնորհված ձեռնարկություն:

Այսօր արդեն պարզ է, որ ՀՀ սեփականաշնորհման ընթացքում վարած քաղաքականությունը վերանայման, վերաիմաստավորման կարիք է զգում: Այստեղ պիտի կարեւորել սեփականաշնորհման մարդասիրական ուղղությունը: Ինչպես հայտնի է, ամենաշատ տուժեցին բնակչության խնայողությունները: Տեղի ունեցավ հասարակության սոցիալ-տնտեսական ծայրահեղ բեւեռացում՝ գերհարուստների (4,7 տոկոս), հարուստների (8-9 տոկոս) եւ աղքատների:

բ) ՀՀ սեփականաշնորհումը լուծեց քաղաքական խնդիր:

Սեփականաշնորհման անցկացումը մեզանում ուղեկցվեց քրեական խոշոր չարաշահումներով: Այն լուծեց ոչ թե տնտեսական, այլ քաղաքական խնդիր, որի նպատակը սեփականության վերաբաշխումն էր եւ նոր դասակարգի՝ այսպես կոչված սեփականատերերի ստեղծումը: Գոնեիկ մեթոդներով հանրային սեփականությունն անցավ արկածախնդիր, որպես կանոն հանրապետության ղեկավարությանը մոտ կանգնած խմբերի ձեռքը: Ոչ մի բանվոր, ոչ մի ակադեմիկոս մինչեւ օրս սեփականատեր չի դարձել:

Ի դեպ, ըստ ուսումնասիրությունների, ձեռնարկությունների ճնշող մեծամասնությունը սեփականաշնորհվել է 800-1000 եւ ավելի անգամ նվազեցված գներով:

գ) Սվբերային կապիտալը Հայաստանում հասնում է 900 մլն դոլարի:

Անօրինական եկամուտների մուտքը եւ եկամուտների կազմակերպված ձեւով վճարումից խուսափելը դարձել են հանցավոր բիզնեսի խոշոր «բնագավառներ»: Հանրապետությունում հանցավոր խմբավորումների կողմից յուրացված սվբերային կապիտալի օգնությամբ, որը հասնում է 900 մլն դոլարի, ձեւավորվում է անօրինական ճանապարհով հարստանալ ձգտող քրեական կազմակերպությունների ցանց: Միլիոնների հարստություն է ստեղծվում պետական ձեռնարկություններից դրամական միջոցների եւ նյութերի տեղափոխման քրեական գործարքների, անօրինական բանկային ու վարձույթային գործառնությունների, հարկերից խուսափելու ճանապարհով:

դ) ՀՀ տնտեսության լծակները՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների ձեռքին:

Այսօր արդեն ակնհայտ է, որ հանրապետության տնտեսական կառավարման լծակները գտնվում են միջազգային ֆինանսական կազմակերպությունների ձեռքին՝ ի դեմս Միջազգային արժութային հիմնադրամի, Համաշխարհային բանկի եւ այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների: Արմատական տնտեսական եւ ոչ մի խնդիր Հայաստանի կառավարությունը չի կարող լուծել առանց Միջազգային արժութային հիմնադրամի հետ դրանք համաձայնեցնելու:

ե) Չունենք բարենպաստ ներդրումային կլիմա:

Իշխանություններն այսօր մեծ ուշադրություն են դարձնում ներդրումների ակտիվացմանը, հատկապես արտաքին ներդրումների: Բայց ներդրումային ակտիվ դաշտ ունենալու համար նախ պիտի ստեղծել բարենպաստ ներդրումային կլիմա, որը շահագրգռի ներդնողին մեր հանրապետությունում կապիտալ աշխատեցնել:

Իհարկե, եղել են ներդրումները խոչընդոտող օբյեկտիվ խնդիրներ՝ շրջափակումը, արցախյան հարցը: Բայց 1993-94 թթ. պատերազմի, շրջափակման ամենածանր տարիներին տնտեսական ակտիվությունը հանրապետությունում ցածր չի եղել: Ճիշտ է, արտաքին ներդրումներ չենք ունեցել՝ քաղաքական ռիսկի գործոնով պայմանավորված, բայց ներքին կապիտալն աշխատել է: Այնպես որ, ներդրումային ոլորտում թիվ մեկ խոչընդոտը շրջափակումը չէ, ոչ էլ արցախյան խնդրի անորոշ վիճակը, այլ օրենսդրական դաշտի անկատարությունը, հարկային, վարկային ոչ ճիշտ քաղաքականությունը, գործարարների անպաշտպանվածությունը:

Հարկային օրենսդրությունն այնքան հաճախ է փոխվում, որ գործարար աշխարհը չի հասցնում ֆիքսել այդ փոփոխությունները, իսկ հարկային համակարգի աշխատողները հիանալի օգտվում են դրանից: Այնպես որ, թե՛ հարկային օրենսդրությունը, թե՛ հարկային վարչարարությունն այսօր խոչընդոտում են ներդրումային ակտիվ դաշտի ստեղծմանը:

զ) Սվբերային տնտեսությունը՝ քաղաքացիական ընբռնության ձեւ:

Այսօր ընդունված է կարծել, թե սվբերային տնտեսությունը միայն պետության պրոբլեմն է: Բայց որքանով պրոբլեմ է պետության համար բյուջեի իմաստով, այնքան էլ պրոբլեմ է գործարար աշխարհի համար, քանզի սվբերային տնտեսության պայմաններում չի կարող աղահովել ազատ մրցակցություն:

Եթե մեկն աշխատում է սվբերում, հովանավորված է, բնականաբար, նրա զարգանալու հնարավորություններն ավելի մեծ են, քան այն գործարարինը, որը հարկեր է վճարում:

Ձեռնարկության զարգացման համար ամենակարեւոր պայմանը հավասար մրցակցությունը, մեր երկրում փաստորեն աղահովված չէ:

Կարծում եմ մենք, ի վերջո, պարտավոր ենք վերլուծել սվբերային տնտեսությունը ծնող պատճառները. ի՞նչ է այն եւ ինչո՞ւ է գոյանում: Իմ խորին համոզմամբ, սվբերային տնտեսությունը ոչ այլ ինչ է, քան քաղաքացիական ընբռնություն ընդդեմ ճնշող հարկային մամլիչի, պետության բազում միջամտությունների, քրեական անպաշտպանվածության: Սա գիտակցելուց հետո միայն մենք կարող ենք տնտեսության բարենորոգումների ճանապարհ հարթել:

ԼԻԼԻԹ ԳԲԻԳՈՐՅԱՆ

ԿԱՐԾՐՔԵՐ

Մեր տնտեսությունը երեկ, այսօր, վաղը

Հայաստանի տնտեսական քաղաքականությունը ՀՀ կուսակցությունների գնահատմամբ

Նոյեմբերի 28-ի մեր համարում ներկայացրել էինք ՀՀ կուսակցություններից ՀՌԱԿ, ՀՀՇ, ԱԺՄ ներկայացուցիչների տեսակետները Հայաստանում տարվող տնտեսական քաղաքականության վերաբերյալ: Այս համարում ներկայացնում ենք Հայաստանի անցած 7 տարիների տնտեսական ուղու, սեփականաշնորհման, հարկային, վարկային, ներդրումային ոլորտներում ունեցած հաջողությունների ու սայթաքումների մասին ՀՅԴ, ՀԿԿ եւ «Երկրապահ» պատգամավորական խմբի ներկայացուցիչների գնահատականը:

Պետության կարգավորիչ դերի ուժեղացումը տնտեսությունում առաջնահերթ խնդիր է

ԼԵՈՆԻԴ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀԿԿ կենտկոմի քարտուղար
ԱԺ պատգամավոր,
ծարտարագիտական ակադեմիայի ակադեմիկոս, տնտեսական գիտությունների դոկտոր

ա) Սեփականաշնորհումը հանգեցրեց ազգային աղետի:

Խիստ անհեռանկարային տեսություն է ընկած ՀՀ-ում այսօր տարվող տնտեսական քաղաքականության հիմքում: Հաստատվել է քաղաքատնտեսության կողմից վերջնականապես մերժված մերկանտիլիզմի սկզբունքը, որի համաձայն հասարակական հարստության գոյացման աղբյուրը ոչ թե արդյունաբերությունն է, այլ առեւտուրը: Շահույթը, փաստորեն, ստեղծվում է ոչ համարժեք փոխանակության շնորհիվ: Առաջներում այս երեւույթը դրակվում էր որպես սպեկուլյացիա, հիմա՝ որպես շուկայական հարաբերություններ:

Այդ հարաբերությունների ձեւավորման փուլում շուկայական տնտեսությունն ի զորու չէ ինքնուրույնաբար դուրս գալու ճգնաժամից եւ զարգանալու: Եվ այս պայմաններում խիստ կարեւոր է պետության կարգավորիչ դերի բարձրացումը: Բայց մեր հանրապետությունում, ընդհակառակը, պետության կարգավորիչ դերը տնտեսահարաբերություններում հետեւողականորեն նվազում է:

Հայաստանում տնտեսության զարգացման ճանապարհ ընտրվեց սեփականության մասնավորեցումը, որը 1992-ից սկսած մեր երկիրը հասցրեց ազգային աղետի եզրին: Այսպես, ներքին համախառն արտադրանքի ծավալը նվազեց 62 տոկոսով, կապիտալ ներդրումներինը՝ 88 տոկոսով, ազգային եկամտինը՝ 56 տոկոսով, արդյունաբերական արտադրության ծավալը՝ 60 տոկոսով: Կառավարության իրականացրած գների ազատականացումը եւ դրա հարուցած սղաճը վերջնականապես արժեզրկեցին բնակչության խնայողությունները: Տեղի ունեցավ հասարակության սոցիալ-տնտեսական ծայրահեղ բեւեռացում՝ գերհարուստների (4,7 տոկոս), հարուստների (8-9 տոկոս) եւ աղքատների:

բ) ՀՀ սեփականաշնորհումը լուծեց քաղաքական խնդիր:

Սեփականաշնորհման անցկացումը մեզանում ուղեկցվեց քրեական խոշոր չարաշահումներով: Այն լուծեց ոչ թե տնտեսական, այլ քաղաքական խնդիր, որի նպատակը սեփականության վերաբաշխումն էր եւ նոր դասակարգի՝ այսպես կոչված սեփականատերերի ստեղծումը: Գոնեիկ մեթոդներով հանրային սեփականությունն անցավ արկածախնդիր, որպես կանոն հանրապետության ղեկավարությանը մոտ կանգնած խմբերի ձեռքը: Ոչ մի բանվոր, ոչ մի ակադեմիկոս մինչեւ օրս սեփականատեր չի դարձել:

Ի դեպ, ըստ ուսումնասիրությունների, ձեռնարկությունների ճնշող մեծամասնությունը սեփականաշնորհվել է 800-1000 եւ ավելի անգամ նվազեցված գներով:

գ) Սվբերային կապիտալը Հայաստանում հասնում է 900 մլն դոլարի:

Անօրինական եկամուտների մուտքը եւ եկամուտների կազմակերպված ձեւով վճարումից խուսափելը դարձել են հանցավոր բիզնեսի խոշոր «բնագավառներ»: Հանրապետությունում հանցավոր խմբավորումների կողմից յուրացված սվբերային կապիտալի օգնությամբ, որը հասնում է 900 մլն դոլարի, ձեւավորվում է անօրինական ճանապարհով հարստանալ ձգտող քրեական կազմակերպությունների ցանց: Միլիոնների հարստություն է ստեղծվում պետական ձեռնարկություններից դրամական միջոցների եւ նյութերի տեղափոխման քրեական գործարքների, անօրինական բանկային ու վարձույթային գործառնությունների, հարկերից խուսափելու ճանապարհով:

դ) ՀՀ տնտեսության լծակները՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների ձեռքին:

Այսօր արդեն ակնհայտ է, որ հանրապետության տնտեսական կառավարման լծակները գտնվում են միջազգային ֆինանսական կազմակերպությունների ձեռքին՝ ի դեմս Միջազգային արժութային հիմնադրամի, Համաշխարհային բանկի եւ այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների: Արմատական տնտեսական եւ ոչ մի խնդիր Հայաստանի կառավարությունը չի կարող լուծել առանց Միջազգային արժութային հիմնադրամի հետ դրանք համաձայնեցնելու:

Մեր տնտեսական քաղաքականությունը վերանայման կարիք ունի

«Երկրապահ» պատգամավորական խմբի քարտուղար
ՀԵՐՄԻՆԵ ՆԱՂԴԱԼՅԱՆ

ա) Սեփականաշնորհումը ինքնանպատա՞կ, կամ ինչպե՞ս ես, սեփականաշնորհված ձեռնարկություն:

Այսօր արդեն պարզ է, որ ՀՀ սեփականաշնորհման ընթացքում վարած քաղաքականությունը վերանայման, վերաիմաստավորման կարիք է զգում: Այստեղ պիտի կարեւորել սեփականաշնորհման մարդասիրական ուղղությունը: Ինչպես հայտնի է, ամենաշատ տուժեցին բնակչության խնայողությունները: Տեղի ունեցավ հասարակության սոցիալ-տնտեսական ծայրահեղ բեւեռացում՝ գերհարուստների (4,7 տոկոս), հարուստների (8-9 տոկոս) եւ աղքատների:

բ) ՀՀ սեփականաշնորհումը լուծեց քաղաքական խնդիր:

Սեփականաշնորհման անցկացումը մեզանում ուղեկցվեց քրեական խոշոր չարաշահումներով: Այն լուծեց ոչ թե տնտեսական, այլ քաղաքական խնդիր, որի նպատակը սեփականության վերաբաշխումն էր եւ նոր դասակարգի՝ այսպես կոչված սեփականատերերի ստեղծումը: Գոնեիկ մեթոդներով հանրային սեփականությունն անցավ արկածախնդիր, որպես կանոն հանրապետության ղեկավարությանը մոտ կանգնած խմբերի ձեռքը: Ոչ մի բանվոր, ոչ մի ակադեմիկոս մինչեւ օրս սեփականատեր չի դարձել:

Ի դեպ, ըստ ուսումնասիրությունների, ձեռնարկությունների ճնշող մեծամասնությունը սեփականաշնորհվել է 800-1000 եւ ավելի անգամ նվազեցված գներով:

գ) Սվբերային կապիտալը Հայաստանում հասնում է 900 մլն դոլարի:

Անօրինական եկամուտների մուտքը եւ եկամուտների կազմակերպված ձեւով վճարումից խուսափելը դարձել են հանցավոր բիզնեսի խոշոր «բնագավառներ»: Հանրապետությունում հանցավոր խմբավորումների կողմից յուրացված սվբերային կապիտալի օգնությամբ, որը հասնում է 900 մլն դոլարի, ձեւավորվում է անօրինական ճանապարհով հարստանալ ձգտող քրեական կազմակերպությունների ցանց: Միլիոնների հարստություն է ստեղծվում պետական ձեռնարկություններից դրամական միջոցների եւ նյութերի տեղափոխման քրեական գործարքների, անօրինական բանկային ու վարձույթային գործառնությունների, հարկերից խուսափելու ճանապարհով:

դ) ՀՀ տնտեսության լծակները՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների ձեռքին:

Այսօր արդեն ակնհայտ է, որ հանրապետության տնտեսական կառավարման լծակները գտնվում են միջազգային ֆինանսական կազմակերպությունների ձեռքին՝ ի դեմս Միջազգային արժութային հիմնադրամի, Համաշխարհային բանկի եւ այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների: Արմատական տնտեսական եւ ոչ մի խնդիր Հայաստանի կառավարությունը չի կարող լուծել առանց Միջազգային արժութային հիմնադրամի հետ դրանք համաձայնեցնելու:

ե) Չունենք բարենպաստ ներդրումային կլիմա:

Իշխանություններն այսօր մեծ ուշադրություն են դարձնում ներդրումների ակտիվացմանը, հատկապես արտաքին ներդրումների: Բայց ներդրումային ակտիվ դաշտ ունենալու համար նախ պիտի ստեղծել բարենպաստ ներդրումային կլիմա, որը շահագրգռի ներդնողին մեր հանրապետությունում կապիտալ աշխատեցնել:

Իհարկե, եղել են ներդրումները խոչընդոտող օբյեկտիվ խնդիրներ՝ շրջափակումը, արցախյան հարցը: Բայց 1993-94 թթ. պատերազմի, շրջափակման ամենածանր տարիներին տնտեսական ակտիվությունը հանրապետությունում ցածր չի եղել: Ճիշտ է, արտաքին ներդրումներ չենք ունեցել՝ քաղաքական ռիսկի գործոնով պայմանավորված, բայց ներքին կապիտալն աշխատել է: Այնպես որ, ներդրումային ոլորտում թիվ մեկ խոչընդոտը շրջափակումը չէ, ոչ էլ արցախյան խնդրի անորոշ վիճակը, այլ օրենսդրական դաշտի անկատարությունը, հարկային, վարկային ոչ ճիշտ քաղաքականությունը, գործարարների անպաշտպանվածությունը:

Հարկային օրենսդրությունն այնքան հաճախ է փոխվում, որ գործարար աշխարհը չի հասցնում ֆիքսել այդ փոփոխությունները, իսկ հարկային համակարգի աշխատողները հիանալի օգտվում են դրանից: Այնպես որ, թե՛ հարկային օրենսդրությունը, թե՛ հարկային վարչարարությունն այսօր խոչընդոտում են ներդրումային ակտիվ դաշտի ստեղծմանը:

զ) Սվբերային տնտեսությունը՝ քաղաքացիական ընբռնության ձեւ:

Այսօր ընդունված է կարծել, թե սվբերային տնտեսությունը միայն պետության պրոբլեմն է: Բայց որքանով պրոբլեմ է պետության համար բյուջեի իմաստով, այնքան էլ պրոբլեմ է գործարար աշխարհի համար, քանզի սվբերային տնտեսության պայմաններում չի կարող աղահովել ազատ մրցակցություն:

Եթե մեկն աշխատում է սվբերում, հովանավորված է, բնականաբար, նրա զարգանալու հնարավորություններն ավելի մեծ են, քան այն գործարարինը, որը հարկեր է վճարում:

Ձեռնարկության զարգացման համար ամենակարեւոր պայմանը հավասար մրցակցությունը, մեր երկրում փաստորեն աղահովված չէ:

Կարծում եմ մենք, ի վերջո, պարտավոր ենք վերլուծել սվբերային տնտեսությունը ծնող պատճառները. ի՞նչ է այն եւ ինչո՞ւ է գոյանում: Իմ խորին համոզմամբ, սվբերային տնտեսությունը ոչ այլ ինչ է, քան քաղաքացիական ընբռնություն ընդդեմ ճնշող հարկային մամլիչի, պետության բազում միջամտությունների, քրեական անպաշտպանվածության: Սա գիտակցելուց հետո միայն մենք կարող ենք տնտեսության բարենորոգումների ճանապարհ հարթել:

ԼԻԼԻԹ ԳԲԻԳՈՐՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ԹՈՒՐՔԻԱ

Էջեւիթի կառավարության կազմավորմամբ քաղաքական ճգնաժամը չի հաղթահարվում

Նոյեմբերի 25-ին Թուրքիայում տաղալվեց Մեսութ Յըլմազի կառավարությունը: Դրան հետեւեցին նոր կառավարության ձեւավորման աշխատանքները: Նախագահ Սուլեյման Դեմիրելը համաղաղասխան հանձնարարականով նախ դիմեց Չախ ժողովրդավարական կուսակցության նախագահ Բյուլենթ Էջեւիթին, ապա նաեւ Մեջլիսի անկախ պատգամավոր Յալըմ Էրեգին: Երբ վերջիններս հերթականությամբ ձախողվեցին, կառավարական ճգնաժամը Թուրքիայում քաղաքական վերածելու հակակշիռներ ձեռք բերեց:

Ահա այս պայմաններում Դեմիրելը կառավարություն կազմելու պարտականությունը կրկին Էջեւիթին հանձնարարեց: Վերջինս կրկին Չախ ժողովրդավարական կուսակցության փոքրամասնական կառավարություն ձեւավորելու առաջադրանքով հանդիպումներ անցկացրեց այլ կուսակցությունների ղեկավարների հետ: Նրան հաջողվեց ապահովել «Մայր հայրենիք» եւ «Ճշմարիտ ուղի» կուսակցությունների աջակցությունը: Դրանով փաստորեն ապահովվեց նաեւ Մեջլիսի վստահության քվեն Էջեւիթի կառավարության համար: Հունվարի 11-ին Սուլեյման Դեմիրելը վավերացրեց Բյուլենթ Էջեւիթի կառավարության կազմը:

Հունվարի 12-ին վարչապետ Էջեւիթը Մեջլիսի ուշադրությանը ներկայացրեց կառավարության ծրագիրը: Դրա քննարկումը տեղի կունենա հունվարի 15-ին, իսկ հունվարի 17-ին նա կհայցի վստահության քվե: Թեեւ կասկած չի հարուցում, որ Էջեւիթը կարժանանա վստահության, հարկ է սակայն նշել, որ նրա կառավարության նկատմամբ մոտեցումը Մեջլիսում միանշանակ չէ: «Առաջին Ուղի» կուսակցության նախագահ Ռեջայի Քուրթանը դրա ձեւավորումը համարում է երկրում ժողովրդավարական սկզբունքների կոտրիս ոտնահարում: Դենիզ Բայքալը, որ ժողովրդա-հանրապետական կուսակցության ղեկավարն է, Էջեւիթին մեղադրում է աջակենտրոն կուսակցությունների դիրքերում հանդես գալու մեջ: Բայքալը գտնում է, որ Էջեւիթի Չախ ժողովրդավարական կուսակցությունը բոլոր առումներով, այդ թվում գաղափարախոսական, նույնացվում է Յըլմազի եւ Չիլլերի կուսակցությունների հետ:

Այս ամենի առումով թերեւս հատկանշականը ժողովրդավարական Թուրքիա կուսակցության նախագահ Հյուսամեթթին Չինդորուքի տեսակետներն են: Հունվարի 12-ին նա հանդես գալով թուրքական հեռուստատեսությամբ, ընդգծեց, որ նոր կառավարության կազմավորման համար ուղիղ 47 օր է պահանջվել, այսինքն Թուրքիան 47 օր կորցրել է, որպեսզի կառավարությունը ձեւավորի մի կուսակցություն, որը Մեջլիսում տիրապետում է պատգամավորական տեղերի ընդամենը 12 տոկոսին: «Երկրում, շարունակեց Չինդորուքը, քաղաքական ճգնաժամ է, դրա հաղթահարումը ենթադրում է ոչ թե թույլ, այլեւ ուժեղ կառավարության ձեւավորում: Էջեւիթի կառավարությունը ոչ միայն թույլ է, այլ նրա գոյությունը անմիջականորեն կախված է աջակցության հարցում այլ կուսակցությունների քմահաճույքից: Ահա թե ինչու Էջեւիթի կառավարության կազմավորմամբ ճգնաժամը չի հաղթահարվում, ավելին, երկրում նոր ճգնաժամ է առաջանում»: Չինդորուքի կարծիքով, անիմաստ է երկրի տնտեսական եւ քաղաքական կայունության պայմանավորումը անչափ թույլ հիմքերի վրա ձեւավորած այս կառավարության գործունեությամբ:

Հարկ է նշել, որ Էջեւիթի կառավարությունը, անկախ փոքրամասնական բնույթից, անցումային է նաեւ: Քանի որ Մեջլիսի հաջորդ ընտրություններն արդեն նշանակվել են առաջիկա ապրիլի 18-ին, ուստի նա իշխանության գլուխ կմնա ուշք երեք ամիս: Թե ինչպիսին կլինեն ընտրությունների արդյունքները, ժամանակը ցույց կտա: Դժվար է ասել, դրանք ժամանակին կանցկացվե՞ն, թե՞ կհետաձգվեն: Պարզապես գիտենք, որ ընտրությունների հետաձգման միտումները, պայմանավորված իսլամական «Առաքինություն» կուսակցության հավանական հաղթանակի մտավախությամբ, առկա են թե նախագահ Դեմիրելի եւ թե բանակի զորահրամանատարության մեջ: Վերջիններս կամ պետք է հասնեն Մեջլիսի առաջիկա ընտրությունների հետաձգմանը, կամ էլ ձեռնարկեն համաղաղասխան միջոցառումներ, սահմանափակելու իսլամականների հաղթանակի հնարավորություններն ընտրություններում:

Ընտրությունների հետաձգումը նշանակում է, որ Էջեւիթի փոքրամասնական կառավարությունը երկրում կշարունակի իր գործունեությունը: Դա իր հերթին անհրաժեշտ դարձնում կառավարությանը Մեսութ Յըլմազի «Մայր հայրենիք» եւ Թանսու Չիլլերի «Ճշմարիտ ուղի» կուսակցությունների շարունակական աջակցությունը: Հասկանալի է, որ երբ Յըլմազի կառավարության հաղթանակից հետո, Էջեւիթը Չախ ժողովրդավարական կուսակցության կառավարության առաջարկով դիմել էր Չիլլերին, վերջինս կտրականապես մերժել էր նրան: Կառավարություն կազմելու պարտականությունները երեքին հանձնարարելուց հետո է, որ Չիլլերը միջամտել եւ Էջեւիթի փոքրամասնական կառավարությանն աջակցելու պատրաստակամություն էր հայտարարել: Փաստորեն Դեմիրելը լաջ գիտենալով Չիլլեր-երեք անձնական սուր հակասությունների մասին, վերջինի միջոցով ապահովեց Չիլլերի աջակցությունը Էջեւիթին: Նոր կառավարության հարցում Դեմիրելը նպատակին հասավ: Էջեւիթի կառավարությունը կազմված է վարչապետից եւ 24 նախարարներից: Դրա կազմում տեղ են գտել երկու փոխվարչապետ, 5 պետնախարար: Ընդ որում, առաջիկա ընտրություններում կառավարության անկողմնակալությունն ապահովելու համար, երկրում ընդունված կարգի համաձայն, արդարադատության, ներքին գործերի եւ տրանսպորտի նախարարներն ընտրվել են անկախ գործիչներից:

Վարչապետ Էջեւիթի կառավարությունում աթոռները բաշխվել են հետեւյալ կերպ. փոխվարչապետներ Հյուսամեթթին Օզքանն եւ Հիմեթ Ուլուդբայ, պետնախարարներ՝ Շյուքրյե Սինա Գյուրել, Մուսթաֆա Յըլմազ, Հասան Գեմիջի, Ֆիքրեթ Ունլյու, Այդըն Թյումեն, արդարադատության Սելչուք Օզքեք, ներքին գործերի Զաեիթ Բայար, պաշտպանության՝ Հիմեթ Սամի Թյուրք, արտգործնախարար Իսմայիլ Ջեմ, ֆինանսների՝ Զեքերիա Թեմիզել, լուսավորության՝ Մեթին Բոսթանջըօղլու, քաղաքաշինության՝ Ալի Ըլդոյ, առողջապահության՝ Մուսթաֆա Գյուվեն Քարահան, տրանսպորտի՝ Հասան Բասրի Աթքան, գյուղատնտեսության՝ Մահմուդ Էրդիր, աշխատանքի եւ սոցապ՝ Նամի Չաղան, արդյունաբերության եւ առեւտրի՝ Մեթին Շահին, էներգետիկայի եւ բնական պաշարների՝ Չիյա Աթաշ, մշակույթի՝ Իսթեմիհան Թալայ, զբոսաշրջության՝ Ահմեդ Թան, անտառ-տնտեսության՝ Արիֆ Սեզեր եւ բնապահպանության՝ Ֆեյզի Այթեքին:

Վարչապետ Բյուլենթ Էջեւիթը ծնվել է 1925 թ.-ին Ստամբուլում: 1966 թ.-ին զբաղեցրել է ժողովրդա-հանրապետական կուսակցության գլխավոր քարտուղարի պաշտոնը, իսկ 1972-ին Աթաթուրքի գինակից Իսմեթ Ինյոնյուին դուրս մղելով նրա շարքերից, դարձել է գլխավոր նախագահ: 1980 թ.-ի սպետեմբերի 12-ի պետական հեղաշրջումից հետո կուսակցական բազմաթիվ այլ գործիչների հետ կալանավորվել եւ ազատվել է Համզաոյ զրկվելով քաղաքական գործունեության իրավունքից: 1987 թ.-ին Թուրքիայում անց է կացվել կուսակցական նախկին գործիչների քաղաքական իրավունքները վերականգնելու շուրջ հանրաքվե, որի արդյունքում Էջեւիթը նորից մուտք է գործել քաղաքական ասպարեզ:

ՎԱՀԱՆ ՉԱԲԵՏՅԱՆ

Միջազգային շուկայում նավթի գների անկումը շարունակվում է

Սկիզբը էջ 1

Ինչպես հայտնի է, այսօրվա դրությամբ ՄԱԿ-ի «Նավթ՝ սննդամթերքի դիմաց» ծրագրի շրջանակներում Իրաքը օրական 1 մլն 800 հազար բարել նավթ է արտահանում՝ հիմնական մասը Իրաք-Թուրքիա (Ջեյհան նավահանգիստ) խողովակաշարով, որին, թերեւս, որեւէ վտանգ չէր սպառնում: Պարսից ծոցի պատերազմից հետո, երբ Իրաքի դեմ կիրառված էմբարգոյի պատճառով փակվեց վերոհիշյալ խողովակաշարը, Անկարան բազմիցս հայտարարելով, որ դա տնտեսական զգալի վնաս է պատճառում Թուրքիային, հաստատում էր պահանջում: Բացի այդ, Իրաքյան նավթի սահմանափակ արտահանումից ստացված եկամտի որոշ մասն էլ իբրեւ փոխհատուցում տրվում է ԱՄՆ-ի մյուս դաշնակից Քուվեյթին: Ահա թե ինչու անգամ Իրաքի ոմբակոծությունների ընթացքում նավթի արտահանումը ոչ մի օր չընդհատվեց: Նշենք նաեւ, որ Իրաքը տնօրինում է աշխարհում հայտնաբերված նավթի պաշարների 11 տոկոսը եւ կարող է օրական մինչեւ 6 մլն բարել նավթ արտահանել:

Ինչեւէ, նավթի գների անկումը շարունակվում է, ինչը խիստ մտահոգում է նավթ արտահանող երկրներին, որոնք ջանքեր են գործադրում իրավիճակը շտկելու: 1998 թ. դեկտեմբերի 17-ին Սաղրիդում տեղի ունեցավ Սաուդյան Արաբիայի, Վենեսուելայի եւ Մեխիկայի նավթարդյունաբերության նախարարների նիստ՝ նվիրված միջազգային շուկայում նավթի գների անկումը կասեցնելուն: ենթադրվում էր, որ կողմերը համաձայնության կգան օրական 1 մլն 500 հազար բարել արտահանության կրճատման շուրջ: Այդ ենթադրությունները եւս իրականություն չդարձան: Իսկ մինչ այդ, նոյեմբերի 26-ին, հարցը քննարկվել էր նաեւ Վիեննայում կայացած OPEC-ի անդամ երկրների նավթարդյունաբերության նախարարների համաժողովում: Թեեւ համաժողովի մասնակիցները համակարծիք էին, որ նավթի գների անկումը կասեցնելու նպատակով անհրաժեշտ է արտադրության կրճատում, սակայն ոչ միայն կրճատման ծավալի վերաբերյալ ընդհանուր հայտարարի չեկան, այլեւ արտահանության ներկա մակարդակը պահպանելու ժամկետները երկարաձգելու որոշում չկայացվեց, ինչը համաժողովի ելքին պայմանավորված էր շուկայում պահանջարկի համեմատ տարբեր պատճառներով (ասիական երկրներում պահանջարկի նվազումը, Արեւմուտքում նավթի հսկայական ֆանկության պահեստավորումը, առավելապես արտադրող երկրներում նավթի արտահանման անվերահսկելիությունը եւ այլն) առաջարկի զգալի գերազանցությամբ: Հանգամանք, որը մտահոգեց նավթ արտահանող երկրներին, որոնք ուշացումով սկսեցին որոշ քայլեր կատարել: 1998 թ. մարտի 23-ին նավթ արտահանող երեք խոշոր երկրներ՝ Սաուդյան Արաբիան, Վենեսուելան եւ Մեխիկան, էր Ռիադում որոշեցին ընդհանուր առմամբ օրական 5 հազար բարելով կրճատել իրենց նավթի արտահանումը: Իսկ մարտի 30-ին OPEC-ի անդամ երկրների համաժողովը որոշում ընդունեց կազմակերպության նավթի առաջարկը միջազգային շուկայում օրական 1 մլն 245 հազար բարելով կրճատելու վերաբերյալ: Բացի այդ, OPEC-ից դուրս նավթ արտահանող երկրները եւս ընդհանուր գումարով օրական 300 հազար բարելով կրճատեցին նավթի արտահանումը: Այսուհանդերձ, գների անկումը կասեցնելու ուղղությամբ դրական արդյունք չարձանագրվեց, փաստ, որը վկայում էր միջազգային շուկայում նավթի գերհագեցման մասին: OPEC-ի երկու անդամներ՝ Վենեսուելան, աշխարհի խոշորագույն նավթ արտահանող Սաուդյան Արաբիան եւ ոչ անդամ Մեխիկան իրարկադված հունիսի սկզբին կրկին այս անգամ 450 հազար բարելով կրճատեցին նավթի մուտքը միջազգային շուկա: Դարձյալ արդյունք: 1998 թ. հունիսին արդեն միջազգային շուկայում 1 բարել նավթի գինը կազմում էր ընդամենը 12,40 դոլար: Հանգամանք, որը OPEC-ի անդամներին հարկադրեց հունիսի 24-ին նավթի գները վերահսկելի դարձնելու նպատակով կրկին արտահանումը օրական 500 հազար բարելով կրճատել: Այլ կերպ ասած, OPEC-ի ջանքերով, ընդհանուր գումարով նավթի առաջարկը միջազգային շուկայում կրճատվեց 3 միլիոն 100 հազար բարելով, բայց եւ այնպես նավթի գների անկումը շարունակվեց: Երեւույթ, որը պայմանավորված է OPEC-ի անդամների՝ շաս հաճախ նավթի արտահանումը կրճատելու վերաբերյալ իրենց պարտավորություններին հավատարիմ չմնալով, ինչպես նաեւ միջազգային շուկայում OPEC-ի փայաբաժնի կրճատմամբ: Եթե 70-ական թվականներին OPEC-ին էր պատկանում արտահանության 50 տոկոսը, ինչը հնարավորություն էր ընձեռում կազմակերպությանը միջազգային շուկայում վերահսկել նավթի գները, ապա այժմ՝ արտահանելով ընդամենը 37 տոկոսը, մասամբ զրկվել է այդ հնարավորությունից:

Ստեղծված իրավիճակում էլ ավելի են սրվում OPEC-ի անդամ երկրների միջեւ առկա տարաձայնությունները: Ոմանք որպես փրկության ելք առավել կտրուկ միջոցներ են առաջարկում: Դեկտեմբերի 10-ին Լիբիայի նախագահ Մուամար Կադաֆին առաջարկեց, որ մինչեւ ընթացիկ ձմռան ավարտը OPEC-ը լիովին դադարեցնի նավթի արտահանումը: Կադաֆիի կարծիքով, միայն այդպես կարելի է վիճակը բարելավել: Առաջարկը օրոշ դրական արձագանքների է արժանացել OPEC-ի անդամների կողմից: Թեհրանը թեեւ առ այսօր համագործակցում է էր Ռիադի հետ, սակայն Իրանի որոշ շրջանակներ հավանության են արժանացնում Կադաֆիի առաջարկը: Կան նաեւ կարծիքներ, որ նավթի արտահանման կասեցումը դադարեցումը լուրջ հարված կլինի OPEC-ի անդամների տնտեսությանը: Այս առնչությամբ հարկ է նշել, որ թերեւս ավելի տրամաբանական են հնչում հակառակ տեսակետները, եթե նավթի գների անկումը նույն տեմպերով շարունակվի, ապա մեկ բարելը 7,5 դոլար արժողությամբ նավթի արտադրությունը OPEC-ի որոշ անդամների, այդ թվում Նիգերիայի, Ինդոնեզիայի, անգամ Իրանի համար անիմաստ է դառնում: Մինչդեռ Քուվեյթը, որի նավթի յուրաքանչյուր բարելի արտադրական ծախսերը 1 դոլարից պակաս են, եւ նման այլ երկրներ թերեւս ոչ միայն կշարունակեն, այլեւ կմեծացնեն արտադրության ծավալն ի հաշիվ մյուսների: Բացառված չէ, որ իրադարձությունների այդօրինակ զարգացումը հանգեցնի OPEC-ի քայքայմանը, եւ նավթի ասպարեզում եւս ձեւավորվեն ազատ շուկայական հարաբերություններ: Այլ կերպ ասած, նավթի ոլորտում մրցակցությունից դուրս կմղվեն այն երկրները, որոնք նավթ արտադրելու նպատակով հարկադրված են մեծ գումարներ ներդնել: Այս դեպքում մեծակաղաքական որոշ երկրներ՝ թերեւս պետք է հրաժարվեն «Քուվեյթ» դառնալու երազանքից:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Բագրատ Ալեքսանյանի գրքերը սպասվում են ընթերցողի կողմից, հաճույքով ընկալվում են ու երկար ժամանակ մտորելու առիթ են տալիս: Հայ հոգեւոր կյանքի անդասանը մտնելով շուրջ հիսուն տարի առաջ որպես արձակագիր, կարճ ժամանակում նա ճանաչում գտավ, արժանացավ մրցանակների: Նրա պատմվածքները թարգմանվեցին բազմաթիվ լեզուներով: Աղորելով ու ստեղծագործելով Արցախում, Բագրատ Ալեքսանյանն ամեն օր բախվում էր ադրբեջանական իշխանությունների հակահայ քաղաքականությանը, ամեն օր ականատես էր լինում հայոց պատմության ու մշակույթի խեղաթյուրմանը: Եվ այդ ամենը նրան մղեցին դեպի հայքաղաքականությունը: 5-րդ դարի վերջերին տեղի հին նախարարական Առանձահիկ տոհմից Վայազանը ստեղծում է մի փոքրիկ թագավորություն, կառուցում տարվա օրերի թվով եկեղեցիներ, հիմնում բազմաթիվ դպրոցներ, որպես ազգային ինքնագիտակցության հզոր միջոցներ: Քարոզներով, հաճախ էլ բռնությամբ Վայազանը հայրենի հողը մաքրում է օտար հավատից, խթանում է կրթական գործը, հատկապես մեծ ջանքեր է թափում, որ ժողովրդի մեջ բորբոքվի կրոնական ջերմեռանդությունը, բնակչության բոլոր խավերի զավակները ներգրավվեն մեսրոպյան դպրոցներ:

Վայազանի ազգանվեր գործունեությունն արգասավոր շարունակությունը վերացումն էլ մեր օրերում մեկ այլ կարգի չարիք է ծնել՝ կարող են հրաժարակ գալ գիտականորեն չհիմնավորված, հաճախ նույնիսկ վնասակար մտքեր: Բագրատ Ալեքսանյանի գիրքն այդպիսի չարիքներից ոչ միայն զգուշացնում է, այլեւ հուսալի արգելակ է դրանց ճանապարհին: Այդ առումով արժեքավոր են հատկապես Կիլիկյան շրջանի եկեղեցական բարդ հարցերի քննությունն ու խոհերը:

Այսօր թերեւս ավելի, քան երբեւէ, հրատապ է ազգային հստակ գաղափարախոսության պահանջը, ազգի հարատեւման արմատները ճանաչելը: 12–14-րդ դարերում վտանգալից ու աղետավոր եղավ կուրորեն դեպի Արեւմուտք հակվելը, այսպես կոչված

Գիրք, որ մղում է խորհելու եւ գործելու

ռենի պատմության կարեւոր հարցերը, ուշադրությունից դուրս թողնված, ավելի ճիշտ՝ խորհրդային գրաքննությամբ արգելված կամ խոչընդոտվող հիմնախնդիրները: Երեսուն տարուց ավելի նա հետազոտում է Ուտիք-Արցախ հայաշխարհի պատմությունը: Ընթերցողի սեղանին են դրված տասնյակից ավելի պատմագրական հիմնարար աշխատություններ:

«Հայոց Արեւելից կողմանց եկեղեցին ու մշակույթը»: Այսպես է կոչվում Բագրատ Ալեքսանյանի նոր գիրքը: Գրքի առաջին իսկ էջերում հեղինակը պարզում է, թե ինչպես է պատահել, որ հայկական, հայաբնակ ու հայաբուն Արցախ-Ուտիք նահանգները կոչվել են Հայոց Արեւելից կողմանք, Արեւելից աշխարհ, Արեւելք, նույնիսկ Աղվանք: Ինչպես նկատում է հեղինակը, հայ պետականության անկումից հետո հայոց եկեղեցին էր դարձել համա ու անդադրում պահում-պահպանում էր ազգային ամբողջությունը եւ դրանով պայմանավորված հոգեւոր-մշակութային զարգացումն ու առաջընթացը: Ցավոք, Արցախ-Ուտիք նահանգներին կպած օտարոտի անունները, մանավանդ խորհրդային տարիների քաղաքական իրավիճակը, պատճառ են դարձել, որ հետազոտողներն օտար հայացքով նայեն մեր երկրի այդ շրջանների պատմությանը: Սկսելով դարերի խորից, հեղինակը բազմաթիվ ուշագրավ նյութերով ներկայացնում է Հայոց Արեւելից կողմանց, ասել է թե՝ Արցախ-Ուտիք ու հարակից շրջանների հոգեւոր կյանքի ուղին՝ քրիստոնեության հաստատման, Գրիգոր Լուսավորչի կողմից եկեղեցու հիմնադրման, Մեսրոպ Մաշտոցի կողմից հայ նոր դպրոցների բացման ու հետագա բոլոր կարեւոր իրողությունների քննական պատմությունը, որպես մեր ժողովրդի հոգեւոր զարգացման անբաժանելի մաս: Պարզապես կլանում են Վայազան Բարեպաշտի ազգանվեր գործունեությունն արտացոլող էջերը:

Հայ Առաքելականների թագավորության անկումից հետո երկրում գլուխ էին բարձրացրել զանազան աղանդներ, սպառնալից բնույթ էր ստացել հարեւան տերությունների ծուլման քաղաքականությունը: Բագրատ Ալեքսանյանը ցույց է տալիս, թե ինչպես ազգային ինքնուրույնությունը պահպանելու անհրաժեշտությունից թելադրված Հայոց եկեղեցու արեւելյան կողմի այդ թեմը դարձել է կաթողիկոսություն. ավելի հաճախ ենթարկվելով հարձակումների, գտնվելով ավելի մեծ վտանգի տակ, երկրի այդ ծայրաշրջանը պետք է հոգեւոր ավելի լայն իրավունքներ ունենար հայրենյաց հավատն ինքնուրույն պաշտպանելու համար: Հեղինակը բացատրում է նաեւ, թե ինչու այդ թեմը դառնալով կաթողիկոսություն, կոչվել է նաեւ Աղվանից անունով: Կիրակոս Գանձակեցին, որ ինքը հենց Արեւելից աշխարհի ծնունդ էր, նկարագրում է, որ Աղվանից կոչված այդ եկեղեցու հայերն էլ, հոսն էլ հայալեզու էին ու հայրենախոս, Աղվանից կաթողիկոսությունն իբրեւ կենդանի մարմին իր բոլոր բջիջներով կազմված ու մերված է եղել Հայաստանյայց եկեղեցուն:

Հեղինակը բերում է փաստեր, թե հայ եկեղեցուն ու հայ հավատին վերաբերող բազմաթիվ էական հարցեր ինչպես են խեղաթյուրվել անցյալում: Խորհրդային տարիներին գրաքննությունն արգելում էր կամ խոչընդոտում կենսոնս հարցերի արդարամիտ քննությունը: Այդ գրաքննության վերացումն էլ մեր օրերում մեկ այլ կարգի չարիք է ծնել՝ կարող են հրաժարակ գալ գիտականորեն չհիմնավորված, հաճախ նույնիսկ վնասակար մտքեր: Բագրատ Ալեքսանյանի գիրքն այդպիսի չարիքներից ոչ միայն զգուշացնում է, այլեւ հուսալի արգելակ է դրանց ճանապարհին: Այդ առումով արժեքավոր են հատկապես Կիլիկյան շրջանի եկեղեցական բարդ հարցերի քննությունն ու խոհերը:

Այսօր թերեւս ավելի, քան երբեւէ, հրատապ է ազգային հստակ գաղափարախոսության պահանջը, ազգի հարատեւման արմատները ճանաչելը: 12–14-րդ դարերում վտանգալից ու աղետավոր եղավ կուրորեն դեպի Արեւմուտք հակվելը, այսպես կոչված դառնում էին հայրենիք՝ մասնակցելու հայրենի հողի ազատագրությանն ու պաշտպանությանը: Բերված են համախոսականներ՝ ուղղված ցարին, Մոսկվայի, Պետերբուրգի, Կիեւի, Լվովի եւ այլ իշխանավորներին, որոնցով հայերը խնդրում են հնարավորություն ստեղծել՝ վերադառնալու հայրենիք: Արցախ-Ուտիք աշխարհից ու մյուս կողմերից էլ նամակներ էին ուղարկվում հայ հողի ասպանդակն զավակներին. պահանջում վերադառնալ, օգնական լինել աղետի մեջ գտնվող երկրին:

Բոլորը համոզված էին, որ պետք է համախմբվել հայ հողի վրա, պաշտպանել ու շենացնել այդ հողը՝ որպես մեր բոլորի հարատեւման երաշխիք: Եվ այդ առումով Բագրատ Ալեքսանյանի գիրքը սոսկ գիտական կամ ճանաչողական նպատակ չունի: Գիրքը խորհել է տալիս ընթերցողին, սիրում է ինքնուրույն մտածել հայրենի հողի, հայ հավատի ու մշակույթի երեկվա մասին: Սիրում է խորհել այսօրվա խնդիրների մասին՝ անհրաժեշտ դաստեր առնելով անցյալից: Սիրում է գտնել սեփական դերն այսօրվա համազգային խնդիրների լուծման գործում, գիտակցել սեփական պատասխանատվությունը վաղվա հանդեպ:

ԿԻՄ ՂԱՀԲԱՄԱՆՅԱՆ

Էջմիածնի երկրագիտական թանգարանը վերաբացեց դռները

Էջմիածնի երկրագիտական թանգարանը երկար ընդմիջումից հետո՝ կապված նոր շենք տեղափոխվելու, վերակառուցման եւ տնտեսական այլեւայլ դժվարությունների հետ, Ծննդյան տոներին վերաբացեց իր դռները այցելուների առջեւ: Թեեւ թանգարանում ժամանակավորապես կազմակերպվել են այլ բնույթի ցուցահանդեսներ, ասենք 1915 թ. Հայոց եղեռնին եւ արցախյան պատերազմի զոհերին, վաղբրոնզեդարյան մշակույթին (Այգեշատ եւ Արագած գյուղերի տարածքներում գտնվող դամբարանադաշտերի պեղումներից հայտնաբերված նյութերով), սակայն հիմնական ցուցանմուշները ցուցադրելու համար հնարավորություններ չէին ընձեռվում: Ասենք, որ թանգարանը իր տեսակի մեջ միակն է Արարատյան դաշտի տարածքում, ուր պահպանվում են վաղ շրջանի՝ սկսած 5-րդ հազարամյակին մ. թ. ա. վերաբերող համաշխարհային նշանակություն ունեցող, ինչպես նաեւ նեոլիթի, էնոլիթի դարաշրջանին եւ մինչեւ 20-րդ դարին վերաբերող շուրջ 12 հազար ցուցանմուշներ: Ափսոս, որ ցուցադրական կայքի ոչ բավարար լինելու պատճառով ցուցադրվում է ցուցանմուշների մի մասը միայն: Թանգարանի վերաբացմանը ներկա էին եւ այդ առթիվ խոսք ասացին ակադեմիկոս Գեւորգ Ղարիբջանյանը, պատմական գիտությունների դոկտոր, Հայոց եղեռնի թանգարանի տնօրեն Լավրենտի Բարսեղյանը, հնագետ Էմմա Խանզադյանը: Թանգարանի վերաբացման գործում (տնօրեն Հասմիկ Հակոբյան) արժանվույն պետք է գնահատել ողջ աշխատողների հետեւողական եւ նվիրված գործունեությունը, որովհետեւ առանց էական ծախսերի կարողացան նկուղներում տիրող արժեքավոր ցուցանմուշները եւ նյութերը նորից ծառայեցնել իրենց նպատակին:

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԵՐՏԵՐՅԱՆ
Էջմիածին

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Հայերենի այբուբենի ուսուցման ձեռնարկ մանուկների համար

Լեզվի պետական տեսչության «Լեզվագետ» կենտրոնի ղեկավար, «9-րդ հրաշալիք» հեռուստախաղի հեղինակ ու վարող, համանուն թերթերի հրատարակիչ Վաչագան Սարգսյանի հեղինակությամբ լույս է տեսել հայ մանուկների համար նախատեսված մի շատ հետաքրքրական ուսումնական ձեռնարկ «Պատկերագիր այբուբեն» պատկերազարդ գրքույկը: Ի դեպ, սա հեղինակի նույն թեմայի շուրջ այս տարի հրատարակված երկրորդ ձեռնարկն է. «Այբբենարանին» «Ազգը» ժամանակին անդրադարձել է:

«Պատկերագիր այբուբենը» բաղկացած է 40 էջից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է հայոց այբուբենի մի տառը: Հետաքրքրական, որ տվյալ էջի բոլոր թեմատիկ պատկերները սկսվում են տվյալ տառով, իսկ բուսական, կենդանական աշխարհներից եւ այլնից վերցված պատկերները ոչ միայն այդ տառով են սկսվում, այլեւ պատկերված են այդ տառի տեսքով (օրինակ, կատիկը նստած է «կ» տառի տեսքով): Հիմնական պատկերների մասին կան մի քանի տողից բաղկացած տեքստեր, որի բոլոր բառերը սկսվում են տվյալ տառով: Էջատակին հաճախ պատկերավոր տեսքով բերված են բառ-հանելուկներ տառերի օժանդակությամբ:

Ձեռնարկի հույժ դրական կողմերից է, որ ամբողջ գրքույկն իր պատկերներով ու տեքստերով ներծծված է հայկականությամբ, որը երեխային փոխանցվում է ենթագիտակցական մակարդակում: Դրանով այս ձեռնարկը էականորեն տարբերվում է շուկայում հայտնված համանման հրատարակումներից, դրանց մեծագույն մասն արեւմտյան հրատարակումների պատճենումներ են, որոնցով անհնար է ազգային գիտակցություն սերմանել մատաղ սերնդի ուղեղում: Նկարիչ Արա Բաղդասարյանը գերազանց հաջողությամբ է պատկերավոր ներկայացրել հեղինակի ուսուցողական գաղափարները:

«Պատկերագիր այբուբենը» հասկանալի է նաեւ իր գեղատիպ հրատարակությամբ, գունավոր տպագրության բարձրագույն որակով:

ԳԵՎՈՐԳ ՅԱՇԵՑՅԱՆ

Կանցկացվի դասագրքերի մրցույթ

ԵՐԵՎԱՆ, 13 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հունվարի 14-ից սկսվում է միջին դպրոցի 46 անուն դասագրքերի մրցույթ: Այս մասին հայտնեց կրթության եւ գիտության նախարարության ծրագրամեթոդական վարչության պետ Վիկտոր Մարտիրոսյանը: Մրցույթը, որին մասնակցում են մի քանի հրատարակչություններ, բաղկացած է չորս փուլից եւ ընդգրկում է հայերեն եւ օտար լեզուների դասագրքեր:

Գնահատվելու են 10 առարկաների դասագրքեր, որոնց ծրագրերը դեռեւս 1998 թ. հուլիսին հաստատվել են նախարարի կողմից եւ ներկայացվել մրցույթի:

Մրցույթն անցկացնելու համար, ինչպես նշեց Վ. Մարտիրոսյանը, ստեղծվել են ընդունող, ընդհանուր եւ առարկայական գնահատման հանձնաժողովներ, որոնք ձեւավորվել են ակադեմիայի ինստիտուտների, բուհերի եւ քաղաքապետարանի կրթության վարչության կողմից ներկայացված հայտերի հիման վրա: Ընդգրկված մասնագետները մասնակցել են կազմակերպված երկօրյա վերապատրաստման սեմինարին, որին ներկա է եղել Համաշխարհային բանկի փորձագետը եւ քննարկվել են դասագրքերի գնահատմանն առնչվող հարցերը:

ԿԱՆԱԴԱ

Պերճ Միսաքյանի ջազախառն... ներկապնակը

Կանադական «Սաբրրբն» թերթի նոյեմբերի 4-ի համարից մեր պատշաճակից «Աղագայ» շաբաթաթերթը տպագրել է օտարազգի լրագրող Բեռնար Մենդելսանի հոդվածը, որից տեղեկանում ենք, որ Մոնրեալի արեւմտյան մասում բնակվող արվեստագետ Պերճ Միսաքյանի վերջին շրջանի ստեղծագործությունների ցուցահանդեսի բացումն է կատարվել նոյեմբերի 11-ին հին Մոնրեալի Գալերի Սենս Դիզլեր պատկերասրահում: Ցուցահանդեսը, որը գործել է մինչեւ նոյեմբերի 22-ը, հետաքրքրություն է փոխվել է ԱՄՆ, որտեղ նոյեմբերի 28-ից ցուցադրվել է Նեգգիեդի (Հյուսիսային Կարոլինա) Միսաքյան արվեստի պատկերասրահում: Հաճելի զուգադիպությամբ այդ օրերին նկարիչը հրապարակ է հանել նաեւ իր հեղինակած «Անընդմեջ Միսաքյան» խորագրով արվեստաբանական գիրք-ալբոմը, որն, ըստ Բեռնար Մենդելսանի, բարձրորակ տպագրությամբ, 101 էջանոց երկլեզու հատոր է եւ ծննդյան տոների առթիվ հրաշալի նվեր կարող է լինել:

Օտարազգի հեղինակի հոդվածից նաեւ տեղեկանում ենք, որ Միսաքյանի անունը գրանցված է ամերիկյան արվեստի «Ո՞վ ով է» հանրագիտական տեղեկագրքում, եւ որ նրա կտավներն ունեն միջազգային ճանաչում:

Միսաքյանը ծնվել է Ալեքսանդրիայում (Եգիպտոս), 1933-ին: Տասնութ տարեկանում փոխադրվելով Նյու Յորք, ընդունվել է Իթակայի Կոռնել համալսարանը եւ վեց տարի սովորելուց հետո հաստատվել Կանադայում: 1993-ին ենթարկվել է լուրջ վիրահատության, որն անջնջելի տպավորություն է թողել նրա վրա: «Կարծես մահվան հետ հանդիպելու էի գնում: Ես իմ առաքինումը վերագրում եմ Աստծո հանդեպ ունեցած հավատին», գրել է նա իր գրքում: Նկարչությունը դրանից հետո ավելի մեծ նշանակություն է ունեցել իր համար: Նրա նկարչական ստեղծագործությունների վրա հսկայական ազդեցություն է ունեցել ջազը: Նկարելուց նա միշտ լսել է յուրովի մեկնաբանելու աշխարհը»: Նրա նկարների խիստ մեծ պահանջարկ կա այժմ Կանադայում: Ինչպես ջազային երաժշտության մեջ, այնպես էլ նրա կտավներում սովորական իրերը ստանում են նոր, մինչ այդ չհայտնաբերված մեկնաբանություններ՝ ձեւեր ու գույներ: Միսաքյանը մեծ հարգանք է տածում Վան Գոգի, Մատիսի, Շագալի, Բրակի եւ այլ մեծերի հանդեպ:

Եղեռնի թեման նույնպես իր անդրադարձումն է գտել նկարչի գործերում: Ըստ Մենդելսանի, Պերճը, որը երբեք անտարբեր չէ անարդարությունների հանդեպ, 15 կտավ է նվիրել այդ թեմային, որոնցից 14-ում մարդկային տառապանք է նկարագրված, իսկ վերջինում՝ մարդու հաղթանակը: Ամբողջ շարքում գերիշխում են կարմիրն ու կանաչը՝ երկու գույներ, որոնցով Վան Գոգը ներկայացրել է հուսահատությունը մարդկային զգացմունքներում:

Հ. Ե.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

«Երեւան-1»-ը Հայաստանի չեմպիոն

Մինի ֆուտբոլի անդրանիկ առաջնությունը

Ֆիզիկական կուլտուրայի հայկական ոլեական ինստիտուտի մարզադահլիճում նոյեմբերի 14-ից մինչեւ դեկտեմբերի 27-ը անցկացվեց հանրապետության մինի-ֆուտբոլի անդրանիկ առաջնությունը:

Այսօրում 16 մասնակիցներ բաժանվեցին երկու խմբի: Այստեղ առաջին երկու տեղերը զբաղեցնող թիմերը կիսաեզրափակիչում հանդես գալու իրավունք ստացան: Առաջին խմբում այդ պատվին արժանացան «Երեւան-1»-ն ու «Հայը», իսկ երկրորդում՝ «Արծիվն» ու «Գավառը»: Այնուհետեւ խմբերի հաղթողները իրենց ուժերը չափեցին համապատասխանաբար մյուս խմբերում երկրորդ տեղը գրաված թիմերի հետ: «Երեւան-1»-ը բացահայտ առավելության հասավ Գավառ քաղաքի համանուն թիմի նկատմամբ 7-2, իսկ ահա «Արծիվ»-«Հայ» մրցախաղում մինչեւ վերջին րոպեն համառ պայքար ծավալվեց: «Հայի» ֆուտբոլիստներին խաղավարտին հաջողվեց գոլ խփել եւ հաղթել 6-5 հաշվով:

Մրցումների վերջին օրը նախ մրցասպարեզ մտան «Արծիվ» եւ «Գավառը» թիմերը, որոնք խաղարկեցին մրցանակային երրորդ տեղը: Առաջին խաղակեսը (25 րոպե) ավարտվեց երեւանցի ֆուտբոլիստների առավելությամբ՝ 6-4: Ընդմիջումից հետո «Գավառը» մեծ ճիգեր գործադրեց դրությունը փրկելու համար, սակայն ապարդյուն: Եզրափակիչ հանդիպումը «Երեւան-1»-ի եւ «Հայի» միջեւ էլ ավելի լարված պայքարում անցավ: Երբ թիմերը ընդմիջման գնացին, հաշիվը հավասար էր՝ 3-3: Երկրորդ խաղակեսում «Երեւան-1» թիմի ֆուտբոլիստներն ավելի դիպուկ գտնվեցին գրոհների եզրափակման փուլում: 8-5՝ այսպիսի հաշիվ գրանցվեց Հայաստանի մինի ֆուտբոլի անդրանիկ առաջնության եզրափակիչ խաղում: «Երեւան-1» թիմը հաղթեց եւ հռչակվեց չեմպիոն: Նրան հանձնվեց Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի սահմանած մրցանակը՝ փոխանցիկ գավաթը: Մրցանակակիր թիմերի ֆուտբոլիստները պարգեւատրվեցին ՀՖՖ-ի տարբեր կարգի դիպլոմներով: Մրցաշարի կազմակերպիչները նվերներ էին պատրաստել նաեւ առաջնության լավագույն ճանաչված մասնակիցների համար: Ահա նրանք. ֆուտբոլիստ՝ Պողոս Գալստյան («Արծիվ»), գոլ՝ Սերգեյ Հայրբաբամյան («Երեւան-1», 41 գոլ), մարզիչ՝ Լեւոն Մարտյան («Երեւան-1»), մրցավար՝ Վալերի Խաչատրյան:

Վերջում ծեղազրույց ունեցանք հանրապետական կարգի մրցավար Վալերի Խաչատրյանի հետ, որն ակտիվորեն մասնակցել է առաջնության կազմակերպչական աշխատանքներին:

- Մինի ֆուտբոլի մրցումներ անցկացնելու գաղափարը միտ էլ «շրջել» է ֆուտբոլի ֆեդերացիայի աշխատասենյակներում, սակայն տարբեր պատճառներով այն չի իրականացվել: Այս տարի ֆեդերացիան սկսեց լրջորեն զբաղվել այդ հարցով: Ես ինքս գիտեի, որ Երեւանի որոշ շրջաններում մինի ֆուտբոլը սիրված մարզաձեւ է: Հանդիպումներ եմ ունեցել այդ ինքնաստեղծ թիմերի, ինչպես նաեւ մի շարք հասարակությունների ղեկավարների հետ: Ի վերջո, 5-6 ամսվա ընթացքում մեզ հաջողվեց 16 թիմ հավաքել: Իհարկե, մեր ջանքերը ապարդյուն կանցնեին, եթե չգտնվեին մինի ֆուտբոլի էնտուզիաստներ: Նրանց շարքերին կարելի է դասել տեխնիկական գիտությունների թեկնածու Աշոտ Սիմոնյանին, որը ժամանակին հանդես է եկել Կիեւի «Ավիատոր» ռեգբիի թիմում, սպորտի վարպետ է: Երեւան քաղաքի գլխավոր անասնաբույժ Վիկտոր Աբրահամյանին, ՍՊՎ «Արմավենի» ձեռնարկության տնօրեն Ստեփան Մանթաղյանին, Լեւոն Մարտյանին, որի ջանքերով առաջներում մեծապես երկու թիմ է գործել («Երկրպագի» եւ «Թաստերական»): Այսօր նա «Երեւան-1» եւ «Երեւան-2» թիմերի մարզիչն է: Ցավոք, առաջնության աշխարհագրությունը բավական սահմանափակ էր: 16 թիմերից 14-ը Երեւանից էին եւ միայն Գավառի «Գավառ» եւ Վանաձորի «Ինտերկամ» թիմերն էին ներկայացնում հանրապետության մարզերը: Եկող տարի կձգտենք այն ընդլայնել: Ուրախալի է այն փաստը, որ առաջնության խաղերին մասնակցեցին մեր վետերան ֆուտբոլիստները (Լեւոն Հովսեփյան, Գագիկ Հովհաննիսյան, Արտուրա Մուսիսյան, Գեղամ Եղիազարյան, Սերգեյ Հայրբաբամյան...): Անմասն չմնացին նաեւ մրցավարները՝ Սլավա Ղազարյանը, Պողոս Բալիյանը, Կարեն Նալբանդյանը եւ այլք, ինչպես նաեւ Հայաստանի տարբեր հավաքականների մարզիչներ Ատոմ Խաչատրյանը («Հայ»), Ալբերտ Սարգսյանը, Պողոս Գալստյանը (երկուսն էլ՝ «Արծիվ»):

Առաջին խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Երեւան-1	7	7	0	0	71-31	21
2. Հայ	7	5	1	1	46-29	16
3. Երեւան-2	7	5	0	2	69-31	15
4. Ինտերկամ	7	4	0	3	76-29	12
5. ՖԻՄԱ	7	3	1	3	40-62	10
6. Պոլիտեխնիկ	7	2	0	5	32-56	6
7. Կաղիսալ	7	1	0	6	33-65	3
8. Ֆիննախ	7	0	0	7	27-91	0

Երկրորդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Արծիվ	7	7	0	0	74-44	21
2. Գավառ	7	5	0	2	70-38	15
3. Էներգո	7	4	1	2	47-52	13
4. Մաս. վարչ.	7	3	1	3	50-58	10
5. Դինամո	7	3	1	3	45-48	10
6. Էներգիա	7	3	0	4	32-33	9
7. Լավանդա	7	1	1	5	63-70	4
8. Դիվանագետ	7	0	0	7	38-78	0

Կիսաեզրափակիչ
Երեւան-1-Գավառ՝ 7-2
Արծիվ-Հայ՝ 5-6
3-րդ տեղի համար
Արծիվ-Գավառ՝ 11-9
Եզրափակիչ
Երեւան-1-Հայ՝ 8-5

«Երեւան-1» թիմի կազմը. Արմեն Լեւոնյան, Արսյուշա Մովսիսյան, Սաշա Յազանցյան, Կարեն Հարությունյան, Մարաս Հակոբյան, Գագիկ Գրիգորյան, Առաքել Հովսեփյան, Վարդան Մարգարյան, Գեղամ Եղիազարյան, Սերգեյ Հայրբաբամյան: Գլխավոր մարզիչ՝ Լեւոն Մարտյան:

ԳԱԳԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՇԱԽՄԱՏ

Տունվարը շախմատային ամիս է

Տարվա առաջին ամսին Հայաստանի շախմատիստները հանդես կգան տարբեր միջազգային մրցաշարերում:

Այժմ մեր մի խումբ շախմատիստներ՝ գրոսմայստերներ Վլադիմիր Հակոբյանը, Արաշես Մինասյանը, Կարեն Ասրյանը, միջազգային վարպետներ Նորայր Քալանթարյանը, Լեւոն Առնյանը, Արա Մինասյանը եւ Արսեն Եղիազարյանը մասնակցում են Իսպանիայի Լինարես քաղաքում ընթացող «Հանիբալ օփեն» անվանումը կրող ներկայացուցչական մրցաշարին:

Ի դեպ, Արսեն Եղիազարյանը Լինարես քաղաք է մեկնել Ֆրանսիական Լե Մանս քաղաքից, որտեղ հանդես էր գալիս ավանդական, թվով 12-րդ միջազգային փառատոնում: Հայաստանի տղամարդկանց հավաքականի ավագ մարզիչը հիանալի խաղաց. նա վեց-յարական մրցակարգով, 7 տուրով անցկացված մրցաշարում վաստակեց 6 միավոր եւ նվաճեց հաղթողի կոչումը: Մրցաշարում մեր հանրապետության երկրորդ ներկայացուցիչը՝ պատանի Անդրանիկ Մարտիկոյանը վաստակեց 5,5 միավոր եւ տեղ գրավեց 6-րդ հորիզոնականում:

Ուժեղագույնների առաջին տասնյակը

Տարվա ընթացքում երկու անգամ շախմատի միջազգային ֆեդերացիան (ՖԻԴԵ) հրապարակում է շախմատիստների անհատական գործակիցները: Վերջին ցուցակը կոչվում գլխավորում է աշխարհի 13-րդ չեմպիոն Գարրի Կասպարովը: Առաջին եռյակն անփոփոխ է մնացել, իսկ 4-րդ եւ 6-րդ հորիզոնականներում «փոխատեղում» է կատարվել Ալեխեյ Շիրովի եւ Վալերի Իվանչուկի միջեւ: Ամենատպավորիչ առաջընթացը կատարել է 21-ամյա Ալեխանդր Մորոզեւիչը. նա 5-րդ հորիզոնականն է զբաղեցնում՝ թռիչք գործելով 44 տեղով: Վերջին 6 ամսվա ընթացքում երիտասարդ գրոսմայստերը հաղթել է այն բոլոր մրցաշարերում, որոնցում հանդես է եկել: Իր դրությունը զգալիորեն բարելավել է նաեւ Պետեր Լեկոն, իսկ Անատոլի Կարպովը կրկին նահանջել է:

Շախմատասերների ուշադրությանն ենք ներկայացնում աշխարհի ուժեղագույն շախմատիստների առաջին տասնյակը. 1(1). Գարրի Կասպարով (Ռուսաստան)՝ 2812 միավոր, 2(2). Վիշվանաթան Անանդ (Հնդկաստան)՝ 2783, 3(3). Վլադիմիր Կրամնիկ (Ռուսաստան)՝ 2740, 4(6). Ալեխեյ Շիրով (Իսպանիա)՝ 2726, 5(49). Ալեխանդր Մորոզեւիչ (Ռուսաստան)՝ 2723, 6(4). Վասիլի Իվանչուկ (Ուկրաինա)՝ 2714, 7(16). Պետեր Լեկո (Հունգարիա)՝ 2711, 8(5). Անատոլի Կարպով (Ռուսաստան)՝ 2710, 9(8). Մայքլ Ադամս (Անգլիա)՝ 2710, 10(9). Պյոտր Սվիդլեր (Ռուսաստան)՝ 2703 միավոր:

ՖՈՒՏԲՈԼ

Զեղ Բլաթերն առաջարկում է

Վերջին շրջանում ՖԻՖԱ-ի նախագահ Զեղ Բլաթերն իր ելույթներում հաճախ է խոսում աշխարհի առաջնություններն ավելի հաճախակի՝ երկու տարին մեկ անցկացնելու մասին: Նա նշում է, որ ընտրական մրցաշարերը շատ երկար են տեւում, իսկ դա շռայլություն է: Բլաթերն առաջարկում է աշխարհի առաջնության եզրափակիչ փուլի մասնակիցներին որոշել աշխարհամասերի առաջնությունների արդյունքներով: ՖԻՖԱ-ի նախագահն իր նորամուծությունները կիրառել առաջարկեց 2004 թվականից, սակայն հետագա ելույթներում ուղղեց իրեն՝ 2008-ից: ՄՕԿ-ի նախագահ Խուան Անտոնիո Սամարանչի հետ հանդիպման ժամանակ Բլաթերը հավաստիացրեց, որ աշխարհի առաջնություններ չեն անցկացվի օլիմպիադաների տարիներին:

ՖԻՖԱ-ի նախագահի առաջարկը սվիններով ընդունեց եվրոպական ֆեդերացիան: ՈՒԵՖԱ-ի նախագահ Լենարտ Յուհանսոնը հայտարարեց, որ իրենք ոչ մի դեպքում չեն համաձայնվի աշխարհի առաջնությունը երկու տարին մեկ անցկացնելու տարբերակին: Շատերը նշում են, որ դրանով իսկ կնվազի աշխարհի առաջնության նշանակալիությունը, հեղինակությունը: Իսկ Բլաթերին, ամենայն հավանականությամբ, գրավում է դրամ վաստակելու նոր հնարավորությունը. չէ՞ որ աշխարհի առաջնության եզրափակիչ փուլը մեծ եկամուտ է բերում:

Հավանաբար, աշխարհի գավաթի ավելի հաճախակի անցկացումը գրավիչ է այլ աշխարհամասերի, մասնավորապես՝ Աֆրիկայի ներկայացուցիչների համար, քանի որ այդ դեպքում աշխարհի առաջնության եզրափակիչ փուլն իրենց մոտ անցկացնելու հավանականությունն ավելի կմեծանա:

Շատերն ընդամենը կես տարի պատասխանատու պաշտոնը ստանձնած Բլաթերի քայլերում հաշվենկատություն են տեսնում: Նշում են, որ ՖԻՖԱ-ի նախագահական ընտրություններին դեռ շատ ժամանակ կա, եւ եթե առաջարկը չանցնի, Բլաթերը ոչինչ չի վտանգում, իսկ եթե տարբերակը հավանության արժանանա, ապա նա բարեփոխիչի համբավի շնորհիվ հրապուրիչ պաշտոնը երկարաձգելու լավ հնարավորություններ կստանա:

Զեղ Բլաթերը (աջից) եւ Միշել Պլատինին

20-րդ դարի լավագույնները

Հոլանդացի հանրահայտ ֆուտբոլիստ Յոհան Կրույֆը, որը 70-ական թվականներին մարզական աշխարհին զարմացրեց իր հոյակապ խաղով, մի կոչման եւս արժանացավ: Ֆուտբոլի պատմության ու վիճակագրության միջազգային ֆեդերացիան «թռչող հոլանդացուն» 20-րդ դարի եվրոպայի լավագույն ֆուտբոլիստ է է անվանել: Ամստերդամի «Այաքսի» հարձակվողը «համառ պայքարում» կարողացել է առաջ անցնել նույնքան հայտնի ֆուտբոլիստներ Ֆրանց Բեկենբաուերից (Գերմանիա) եւ Ալֆրեդո դի Ստեֆանոյից (Իսպանիա):

Այդ նույն ֆեդերացիան հարյուրամյակի Հարավային Ամերիկայի լավագույն ֆուտբոլիստ է համարել լեգենդար բրազիլացի Պելեին, Հյուսիսային եւ կենտրոնական Ամերիկայի՝ Հուգո Սանչեսին (Մեքսիկա): Աֆրիկա աշխարհամասի լավագույն ֆուտբոլիստ է ճանաչվել լիբերիացի Ջորջ Վեան, որն այժմ խաղում է իտալական «Միլան» ակումբում: Ասիայում լավագույնն է համարվել Բում Կուն Չան (Հարավային Կորեա):

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է
ՌԱՇՏԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

ԹԵՆԻՍ

Սկսվեց հերթական մրցաշրջանը

Տարին ակտիվորեն սկսեցին աշխարհի ուժեղագույն թենիսիստները: Մրցաշարերն այժմ իրար են հաջորդում:

Կանանց հետաքրքիր մրցաշար անցկացվեց Հոնկոնգում: Կիսաեզրափակիչ հանդիպումներից մեկում Շթեֆի Գրաֆը (Գերմանիա) հաղթեց Սերենա Ուիլյամսին (ԱՄՆ), իսկ վերջինիս քույր Վենուս Ուիլյամսը՝ Անա Կուռնիկովային (Ռուսաստան): Մարզասերները սպասում էին եզրափակիչում ականատես լինել հետաքրքիր մրցախաղի, որտեղ հանդիպում էին փորձառու Գրաֆն ու երիտասարդ Ուիլյամսը: Սակայն վճռական հանդիպումն անավարտ մնաց: Երբ առաջին խաղափուլում հաշիվը 2-2 էր, Գրաֆը սպամոխի ուժեղ ցավեր զգաց եւ չկարողացավ շարունակել պայքարը: Մրցաշարի հաղթող հռչակվեց Վենուս Ուիլյամսը:

Դոխայում (Կատար) անցկացված տղամարդկանց մրցաշարը բավականին անսպասելի ավարտ ունեցավ: Համաշխարհային դասակարգման ցուցակում 111-րդ տեղը զբաղեցնող 22-ամյա գերմանացի Ռայներ Շուդլերը, որը պարտության էր մատնել մի շարք ճանաչված խաղացողների, եզրափակիչում 6-4, 5-7, 6-1 հաշվով հաղթեց աշխարհի ուժեղագույն թենիսիստներից մեկին՝ անգլիացի Թիմ Հենմանին:

Պետր Կորդա

Շարունակվում են դոպինգ օգտագործելու մեջ մեղադրվող չեխ Պետր Կորդայի անհաջողությունները: Շատ թենիսիստներ անցյալ տարվա Ավստրալիայի բաց առաջնության հաղթողին որոշել են բոյկոտել, եթե վիճակահանության կամքով մրցելու լինեն նրա հետ: Բայց նրանց թվին չի պատկանում Անդրե Ագասին (ԱՄՆ), որը հանդուրժող գտնվեց գործընկերոջ նկատմամբ: Նոր Զելանդիայի Օքլենդ քաղաքում անցկացվող մրցաշարի առաջին շրջանում նա խաղաց Կորդայի հետ: Սակայն հոգեկան վաս վիճակում գտնվող չեխ թենիսիստը չկարողացավ լուրջ դիմադրություն ցույց տալ մրցակցին: Ագասին հաղթեց 6-2, 6-1 հաշվով եւ կշարունակի պայքարը: Երկրորդ շրջան մտան նաեւ Թոմաս Էնքվիստը (Շվեդիա), Մարկ Ֆիլիպուսիսը (Ավստրալիա), Մայքլ Չանգը (ԱՄՆ), որոնք համապատասխանաբար պարտության մատնեցին Գորան Իվանիշեւիչին (Խորվաթիա), Թիմ Հենմանին (Անգլիա), Եվգենի Կաֆելնիկովին (Ռուսաստան):

digitised by A.R.A.R.@

Օրվա հեստերով

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Ադրբեջանը իրեն Հայաստանի հումքային կցո՞ղդ է զգում

ԲԱՔՈՒ, 13 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Ադրբեջանն ապահովում է... Հայաստանի քիմիական համալիրի պահանջմունքները մեծ մասը»: Այսպես է սկսվում «Ջուրն իր ճամփան կգտնի» վերնագրով հոդվածը Բաքվի «Զերկալո» թերթում: Ստորեւ ներկայացնում ենք հոդվածի տեքստը կրճատումներով:

«Արդեն ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ «Ազերնեֆտյանաջաղ» ԱՄ-ում (այն ժամանակ ՆԲՆԳ) արտադրված ադրբեջանական վառելիքով լցակվող հայկական տանկերը գրոհով վերցնում էին Խոջալուն, Շուշին, Լաչինը: Հայտնի է նաեւ, որ ադրբեջանական լիբերալների ներկայիս առաջնորդ Լալա Շովքեթը տակավին վերջերս 1993 թվականի դեկտեմբերին որպես Հեյդար Ալիեւի վարչակազմից իր հեռանալու պատճառ նշեց հենց այն, որ Աղսաֆա եւ Ղազախ կատարած ուղեւորության ժամանակ մամսասանը իրեն են ներկայացրել առաքելյաներ, որ հենց Ռ. Գուլիեւն էր կազմակերպում բենզինի, դիզվառելիքի եւ այլ նավթամթերքների վաճառքը Հայաստանին, որ արտադրվում էին այն ժամանակ իր կողմից վերահսկվող Բաքվի երկու նավթավերամշակման գործարաններում (ԲՆԳ):

Խոսվում է նաեւ, որ էլչին Ամիրասլանովի գլխավորած Ղազախի հատուկ նշանակության ոստիկանական ջոկատի խռովության պատճառներից մեկն էլ դարձավ հենց նավթամթերքների արտահանության նկատմամբ վերահսկողության համար պայքարը:

Ընդհանրապես պետք է խոստովանել, դուր է գալիս մեզ թե ոչ, բայց հենց 1991-1995 թվականներին, այսինքն Հայաստանում վառելիքի ամենածանր ճգնաժամի տարիներին, երբ այս երկիրը նավթամթերքների ստացման այլ աղբյուրներ դեռեւս չուներ, եւ երբ վառելիքի գինը մեր երկրում բազմապատիկ ցածր էր, հենց Ադրբեջանն էր աղահովում իր հակառակորդին վառելիքով:

Դրությունը փոխվեց միայն 1995 թվականի վերջին: Ադրբեջանում վառելիքի բարձրացած գները անբահավեստ դարձրին նրա արտահանումը Հայաստան:

Սովորաբար արտահանությունը Հայաստան իրականացվում էր Բեյուլ-Քյասիք երկաթուղային կայարանով, որի մասին ադրբեջանական մամսավորները գերազանց տեղյակ էին, քանի որ լավ գիտեին, թե ովքեր են վառելիքի առաքողն ու ստացողը: Ստացողները հիմնականում դրածո վրացական ֆիրմաներն էին, ստեղծված հատկապես նրա համար, որ նավթամթերքը տեղափոխեն Հայաստան:

Սակայն նրանցից ես չէր մնում եւ վրացական «Գրուզնեֆտեթրոդուկտ» պետական միավորումը, որն այնուհետեւ կեղծ մամսային փաստաթղթերով այդ վառելիքը փոխադրում էր Հայաստան: Որ դա արվում էր պետական մակարդակով, վկայում են ադրբեջանական ցիստեռնները՝ բերնեբերան լցված բենզինով, մազութով, դիզվառելիքով, որոնք ուղղվում էին Հայաստանի մայրաքաղաք:

Շրջափակման ծիրաններում հայտնված հայերը այն տարիներին մատակարարներին վճարում էին հսկայական փողեր, որոնք, բնականաբար, արդարացնում էին նման գործողությունների ռիսկը:

«Վերածնունդի դարաշրջան»

Ղարաբաղյան հակամարտությունն սկսվելուց հետո բոլոր տեսակի առաքելյաների մատակարարումները, բնականաբար, դադարեցվել էին: Բացառությամբ, ինչպես ասվեց վերը, նավթամթերքների մատակարարումների:

Կապերի վերականգնման առաջին նշանները ի հայտ եկան 1994 թվականի վերջին: Այն ժամանակ հանկարծ սկսեցին ավելանալ, ըստ ադրբեջանական վիճակագրության տվյալների, «Ազերխիմիա» ՊԸ որոշ արտադրատեսակների մատակարարումները Վրաստան, որոնք Վրաստանը խորհրդային տարիներին երբեք չէր գնել:

Օրինակ, համաբխարհային շուկաներում Սումգայիթի մակերեւութային-ակտիվ նյութերի կաուստիկ սոդայի, գործարանի անմրցունակ արտադրանքը, որ երբեք նախկինում չէր գնվել Վրաստանի կողմից, հանկարծ այնտեղ գտավ շահագրգռված գնորդներ: 1998 թվականի 8 ամիսներին «Վրաստան» է առաքվել 147 տոննա այդպիսի արտադրանք: Երբեք, նույնիսկ խորհրդային տարիներին, Վրաստանում չկային նույնիսկ ծեռնարկություններ, որոնք ընդունակ են վերամշակելու քիմիական արդյունաբերության համապատասխան հումքը: Բայց այդ ամենը կար եւ, ըստ երեւույթին, կա Հայաստանում:

Հասկանալի է, որ ոչ «Ազերխիմիայի» ղեկավարությունը, ոչ սումգայիթյան ծեռնարկությունների ղեկավարությունը պայմանագրեր չեն կնքում հայ գնորդների հետ: Սխեման մշակված է նավթամթերքների մատակարարումների համաբանությամբ. պայմանագրեր են կնքվում դրածո վրացական ֆիրմաների հետ, որոնք անուղղակի այդ արտադրանքը վաճառում են հայ սպառողներին: Արդյունքում բոլորը գոհ են, անգամ ադրբեջանական արտադրողները, որոնք առանց այն էլ չեն կարողանում սպառման շուկաներ գտնել իրենց ցածրորակ արտադրանքի համար:

Դարձյալ Ադրբեջանը հումքի մատակարար մնաց, իսկ Հայաստանը՝ դրա վերամշակման մթերքների: Հայաստանի քիմիական համալիրը, որը հումքի սուր կարիք ուներ, որ նախկինում մատակարարվում էր Ադրբեջանից, չհաղթեց օգտվել հակամարտության մեջ առկա անդորրից: Այդ երկրի քիմիական ճյուղի գլխադասային ծեռնարկությունը՝ «Նաիրիտ» ԳԱՄ-ը եւ մյուս գործարանները այդ ժամանակներից սկսեցին ադրբեջանական բազմազան արտադրանք գնել «վրացական միջանցքով»:

Մատակարարումների ծավալը, ըստ «Զերկալոյի» լավատեղյալ աղբյուրներից ունեցած տվյալների, 1998 թվականի 8 ամիսներին հետեւյալն է. վաճառվել է ազոտական թթու 1164 տ ծավալով, սումգայիթյան հոչակավոր էլոր՝ 249 տոննա, կարբոհիդրոգեններ՝ 1947 տոննա, պոլիէթիլեն, որ երբեք նախկինում չի ներկրվել Վրաստան՝ 130 տոննա, եւ քիմիական արտադրանքի զանազան ուրիշ անվանումներ:

Այսպիսով, Ադրբեջանը, ըստ ամենայնի, դարձյալ աղահովում է Հայաստանի քիմիական արդյունաբերության շատ արտադրատեսակների պահանջմունքի գործնականորեն 100%-ը:

Ըստ մեր ունեցած տվյալների, Վրաստանին պահանջվող Հայաստանի շրջաններ է մտնում էլեկտրաէներգիայի մի մասը Ադրբեջանից, որը նախատեսված է Վրաստանի կարիքների համար, որն այդպես էլ դրա կարիքն զգում է:

Բայց եւ Հայաստանը պարտք չի մնում

Ի դեմ, պարտք չի մնում եւ Հայաստանը, որը դարձյալ սկսել է Ադրբեջան առաքել... աղակյա շեր, որոնք Ադրբեջան են ներկրվում «Վրաստանից», որտեղ դրանք իրականում չեն արտադրվում եւ երբեք չեն արտադրվել: Ըստ Ադրբեջանի պետմամսատան տվյալների, միայն 8 ամիսներին դրանցից ներկրվել է 12 հազար դոլար գումարի չափով, եւ էլեկտրալամպեր են ներմուծվել Ադրբեջան 39 հազ. դոլար, եւ այլն:

Հայերը Ադրբեջան են առաքում նաեւ ամիակ, որն այլ սպառման շուկաներ չունի. 8 ամիսներին մատակարարվել է 311 տոննա:

Եզրակացություններ

Նկարագրված վիճակը հաստատում է, որ տնտեսական հարաբերությունները նույնիսկ այնպիսի երկրների միջեւ, ինչպիսին են Ադրբեջանը եւ Հայաստանը, զարգանում են «ջուրն իր ճամփան կգտնի» հայտնի սկզբունքի համաձայն: Կան տնտեսական իրական օրենքներ, որոնց դեմ չի կարող գնալ ոչ մի պետություն՝ փողը եւ կապիտալը, ապրանքները ու ծառայությունները հոսում են այնտեղ, ուր դրանց պահանջարկը մեծ է, որտեղ դրանց իրական արժեքը բարձր է: Եվ քաղաքականությունն այստեղ ի զորու չէ խանգարել:

Ցիրս է, ցավոք, որ կրկին, ինչպես միշտ, մենք՝ պարտված կողմ ենք. եւ տնտեսության մեջ մենք դարձյալ, ինչպես ոչ վաղ անցյալում, Հայաստանի՝ հումքային կցորդն ենք...»:

Քլինթոնից Փոլա Ջոնսը ստացավ 850 հազար դոլար

475 հազարը վճարել է Քլինթոնին ապահովագրած ընկերությունը

Նախագահ Քլինթոնի համար Նոր տարին նշանավորվեց խակի զգալի թեթեւացմամբ: Դեռեւս անցած տարվա նոյեմբերի 13-ին նախագահը եւ նրա հրապարակավ հայտնի առաջին սիրուհին՝ Փոլա Ջոնսը, համաձայնության էին եկել, ըստ որի որպես սեռական ոտնձգության փոխհատուցում նախագահը պարտավորվել էր վճարել 850 հազար դոլար, այդպիսով փակելով իր անձի հետ կապված առաջին սկանդալը, որին հաջորդեցին Մոնիկա Լեւինսկու հետ ավելի հնչեղ մեղադրանքները: Եվ այսպես, երեքշաբթի նախագահի սիրուհին ստացավ նշված գումարը, որի չեկը, ինչպես հայտարարել է Սպիտակ տան մի ավագ խորհրդական, Քլինթոնի փաստաբանն արդեն ուղարկել է Ջոնսի փաստաբաններից մեկին:

Պարզվել է նաեւ, որ գումարի կեսից ավելին՝ 475 հազարը, վճարելու է Չաբ Ինշուրընս աղահովագրական ընկերությունը, 375 հազարն էլ փոխանցվելու է Քլինթոնի անձնական ֆոնդերից:

Նոյեմբերի 13-ի համաձայնությամբ Քլինթոնին չի վերագրվում որեւէ մեղադրանք, սակայն Ջոնսը պնդում է, որ 1991-ին Արկանզասի նահանգապետի պաշտոնում Քլինթոնը նրան դրդել է զբաղվել նախատիրած սեռով: Մեղադրանքն, անշուշտ, մերժվել է: Փոխհատուցումը փակում է Ջոնսի հայցը, սակայն սկանդալն իր սեւ գործն արդեն արել էր: Բանն այն է, որ անցած հունվարին հենց Ջոնսի հայցով դատարան ներկայացած նախագահը ժխտել էր Լեւինսկու հետ որեւէ սիրային կապ: Այդ ժամանակ Ասվածաշնչով երդված նախագահի կեղծ ցուցմունքներն են այժմ դարձել նրա իմփիչմենտի պատճառը:

Ըստ Ռոյթերի, Փոլա Ջոնսի նախկին փաստաբանները գործն առաջ տանելու համար պահանջել էին 800 հազար դոլար, սակայն հայցվորը հրաժարվել էր նրանց ծառայություններից: Ջոնսի ներկա փաստաբաններն անցած 13 ամիսներին կատարած աշխատանքի համար արդեն ներկայացրել են 1,5 մլն դոլարի ծախս:

ԱՐ. Մ.

«Հայհացահատիկ գործակալություն»
բաց բաժնետիրական ընկերությունը
առաջարկում է
ֆուրաժային ցորեն եւ գարի՝
շուկայական գներից անհամեմատ ցածր գներով:
Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել
56-46-83 կամ այցելել
Երեւան, Խանջյան 13ա, 6-րդ հարկ:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Առանձնատուն, 80 քառ. մ., նկուղ-ավտոտնակով եւ 2 բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:
Զանգահարել՝
27-22-57 ժամը՝ 10-16.
58-33-26. ժամը՝ 18-23-ը:

ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ

14 հունվար

1

9.05 Նշանավոր փախուստներ. «Արիայագն Ռաֆոշի»
10.00 Հայլուր
10.15 Մարդը եւ բնությունը
10.50 Գ/Ֆ «Տրուֆալդինոն Բերգամոյից» (1-ին, 2-րդ սերիաներ)
13.00 Հայլուր
13.15 Միասին
17.00 Հայլուր
17.20 Սուտ
17.45 Պատնաս
19.00 Խոշոր շահում
19.15 Իրավունք
19.35 Քայլ
20.00 Հայլուր
20.30 1 լուր
20.50 Երգար Հովհաննիսյանի հիշատակին հավերժության ճանապարհին
21.25 Հինգշաբթի
22.00 Գ/Ֆ «Վերջին ժամկետը»
24.00 Հայլուր

2

09.00 Վահրամ Սարգիսյանը եւ Քրիստինա Գասպարյանը Տոնար լուսվա-ժամանցային հաղորդաշարում
10.00 Առաջին անգամ. Գ/Ֆ «Պահապան հրեշակները»
19.00 Սուտեր
19.30 Սուրհանդակ
19.45 Գ/Ֆ «Պահապան հրեշակները»
21.30 Սուրհանդակ
22.00 Գ/Ֆ «Սպանության պատրանք-3»
23.30 Սուրհանդակ
00.00 Խուժան ալիք
00.20 Գիշերային Կինոսրահ. Ուրգեր Հառեռը «Հենոգլոբին» ֆիլմում
01.45 Սուրհանդակ

4

7.00 Քարի լույս
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Դաժան հրեշակը»
11.30-15.45 Բիզնես TV
16.00 Նորություններ
16.15 Սերիալ «Սինդրարի նոր արկածները»
16.50 Հոսքալի ընկերակցություն
17.05 Սեզամ փողոց
17.35 Մինչեւ 16 տարեկան եւ ավելի
18.00 Սերիալ «Դաժան հրեշակը»
19.00 Նորություններ
19.15 Գուշակիր մեղեդին
19.45 Այստեղ եւ հիմա
20.10 Ա. Շարաթովայի «Արինա» ծրագիրը
20.50 Սերիալ «Մամուխում երգողները»
21.45 Քարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
22.45 Գ/Ֆ «Նեղ եզր»
00.30 Վավերագրական դետեկտիվ «Օրերագիա Տոդազ»
01.00 Օրվա նորություններ
01.20 Գ/Ֆ «Ոռզալինը եւ աղյուսները»

РТР

8.00, 10.50 Քարի լույս. Ռուսաստան
10.35 Հեռուստախաղ «Հաղորդումների ծրագիր»
10.55 Սպորտներ՝ փոստով
11.00 «Սանտա Բարբարա»
11.45 Երաժշտություն, երաժշտություն...
12.00, 15.00, 18.00, 21.00, 01.00 Լուրեր
12.35 Սերիալ «Պետերբուրգյան գաղտնիներ»
13.30 Երկխոսություններ կենդանիների մասին
14.30 Խանութ բազմոցի վրա
15.35 Սերիալ «Ծածկեք նրա դեմքը»
16.25 Սերիալ «Հարուստներն ու նշանավորները»
17.15 Հերթապահ բաժանմունք
17.30 Սերիալ «Առաջին համբույրներ»
18.35 Աստղակ
19.00 Հանձարգիչ
19.20 Գ/Ֆ «Պարտիզանի տունը» (1-ին սերիա)
20.30 Հերթապահ բաժանմունք
20.35 Մուլտֆիլմեր «Քեզ ասող եմ նվիրում», «Ֆարում»
21.35 Սանդրանսներ
21.45 Երկու դաշնամուր
22.30 Կինոյի ժամ. Գ/Ֆ «Ցնորամիտները»
00.05 Սերիալ «Կեղծավորը»
01.30 Հերթապահ բաժանմունք
01.45 Սվետոու

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՊԱՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (569393, 581351) • տեղեկագրերով • էլեկտրոնային տարբերակներով (մագնիսական սկավառակներով, INTERNET ցանցով)

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-22, Արգավանդի 2 Դասակարգման թիվ 65 Դասիչ 69149 Պատվեր 974 Տպաքանակը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 13.01.1999 Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@